	պետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Ալեքսան Պետրոսյան		վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղի ճանապարհի 800մ ասֆալտա-պատման նպատակով նախատեսվել է 48.0 մլն դրամ:
178.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Կորյուն Նահապետյան	Երևանի թիվ 91 դպրոցի վերանորոգման նպատակով նախատեսել 90 մլն դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ք. Երևանի N 91 դպրոցի վերանորոգման նպատակով նախատեսվել է 90.0 մլն դրամ:
179.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Կորյուն Նահապետյան	Երևանի թիվ 91 դպրոցի չօգտագործվող մասնաշենքի առաջին հարկը դարձնել մանկապարտեզ: Նույն մասնաշենքի երկրորդ և երրորդ հարկերում ստեղծել մասնագիտացված արհեստագործական քոլեջ: Այդ նպատակով հատկացնել 200 մլն դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
180.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Կարինե Աճեմյան	Վայոց Ձորի Եղեգնաձոր քաղաքի մարզի մշակույթի տան հիմնա-նորոգում	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
181.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական	Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն, պատգամավոր Կարինե Աճեմյան		
182.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Քննարկել մանկապարտեզների աշխատողների առողջապահության ապահովագրական փաթեթներ տրամադրելու հարցը (թեկուզ 50 տոկոսի չափով, պայմանով, որ մյուս 50 տոկոսը կվճարեն աշխատակիցները կամ համայնքները)	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2014 թվականին պետական և համայնքային նախադպրոցական հաստատությունների անձնակազմի թվաքանակը կազմել է 12725 մարդ, որոնց առողջության ապահովագրական փաթեթներ տրամադրելու համար 2016 թվականին կպահանջվի 474.8 մլն դրամ (50 տոկոսի դեպքում՝ 237,4 մլն դրամ):
183.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Քննարկել հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաներին ուսումնական գործընթացում առողջապահական պետական ապահովագրության հարցը	Հարցի կապակցությամբ հարկ է նշել, որ ներկայումս 0-7 տարեկան երեխաների բժշկական օգնությունը ամբողջությամբ իրականացվում է պետական պատվերի շրջանակներում: Պետական պատվերի շրջանակներում իրականացվում է նաև 7-18 տարեկան երեխաների անհետաձգելի, ինչպես նաև սոցալապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների բժշկական օգնությունը: Ըստ մեր նախնական գնահատականների հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող 7-18 տարեկան երեխաներին պետական պատվերի շրջանակներում ընդգրկելու համար պետական բյուջեից կպահանջվի լրացուցիչ շուրջ 1.8 մլրդ դրամ, որը ներկայումս հնարավոր չէ նախատեսել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
184.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Խաչիկ սահմանապահ համայնքի խմելու ջրի ջրամբարի կառուցում (նախագիծ-նախահաշվի կազմում և հնարավորության դեպքում սկսել նաև ֆինանսավորում)	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
185.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Խաչիկ սահմանապահ համայնքի 20 հատ բնակելի տների կառուցում (Համայնքում առկա են 60 հատ 4-րդ աստիճանի և 65 հատ 3-րդ աստիճանի վթարային բնակելի տներ: 2012-2014թթ. ընթացքում ՀՀ կառավարության հրատապ օգնության ծրագրերով 50 մլն. դրամ գումար տրամադրվել է 4-րդ աստիճանի վթարային տներ ունեցող 12 ընտանիքների, այդ տները կառուցվում են: Բնակելի տների կառուցման հրատապ կարիք ունեն ևս 27 ընտանիքներ: 33 ընտանիքների բնակելի տների կառուցումը նախատեսվում է հետագա տարիներին) - 160 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
186.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունքի մարզի Խաչաղբյուր համայնքի դպրոցի կառուցման աշխատանքների շարունակում (բյուջեի միջոցներով կառուցվել են միայն պատերը) - 50 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
187.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի համայնքային կենտրոնի շենքի վերանորոգում – 70 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
188.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի մշակույթի տան վերանորոգում – 40 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
189.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում – 50 մլն դրամ	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման նպատակով նախատեսվել է 50.0 մլն դրամ:
190.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար համայնքի միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում (25 կմ) - 70 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
191.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Տավուշի մարզի Դիտավան համայնքի 3,2 կմ. երկարությամբ կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման և ջրահեռացման աշխատանքների կատարում - 180 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
192.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Շիրակի մարզի Հովտաշեն համայնքի հանրապետական նշանակության Հոռմ-Արթիկ-Ալագազ գլխավոր ճանապարհին միացնող ճանապարհահատվածը լիարժեք երթևեկելի դարձնելու նպատակով 773 քմ. տարածքի փոսայցման (ասֆալտապատման) աշխատանքների կատարում - 10 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
193.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ Շիրակի մարզի Հայկասար համայնքում հակակարկտային կայանների տեղադրում, որը կապահովի նաև սահմանակից Մարալիկի, Ձորակապի, Տուֆաշենի, Պեմզաշենի և Հայրենյաց համայնքների հողօգտագործման արդյունավետ պաշտպանությունը - 15 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
194.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Արագածոտնի մարզի Թալին-Կարմրաշեն-Ոսկեթաս-Չովասար-Գառնահովիտ ավտոճանապարհի հիմնանորոգում (նախագիծ- նախահաշիվը գտնվում է ՀՀ կապի և տրանսպորտի նախարարությունում): Սա միակ ճանապարհն է, որ այս բոլոր բնակավայրերը կապում է միմյանց հետ և ելք է ապահովում միջպետական մայրուղի:	Մ-1- Կարմրաշեն-Չովասար ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները ներառված են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ նոր վարկային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Առաջարկությունը բյուջեով չիրացնելու դեպքում, խնդրում ենք քննարկել այլ աղբյուրների հնարավորությունը:	ծրագրի շրջանակներում վերականգնման ենթակա ճանապարհների նախնական ցանկում:
195.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ Ազգային ժողովին տրամադրել 4 մլն դրամ՝ մշտական հանձնա- ժողովների դռնբաց նիստերը առցանց հեռարձակելու համար: Այս ծրագրի իրականացման շնորհիվ ՀՀ Ազգային ժողովի նիստերի համար նախատեսված 6 սենյակները կապահովվեն մշտական հանձ- նաժողովների նիստերի և լսումների առցանց հեռարձակման համար անհրաժեշտ կահավորմամբ (մոնիտոր, տեսախցիկ, համակարգիչ, ձայնագրիչ և այլն):	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխա- տեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
196.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ Ազգային ժողովին տրամադրել 15 մլն դրամ՝ տեսախցիկների գնման համար: Հաշվի առնելով, որ 2016 թվականի հունվարի 1-ից հանրապետու- թյունում ամբողջությամբ իրականացվելու է թվային հեռուստահե- ռարձակում և ՀՀ Ազգային ժողովի ներկայիս տեխնիկական միջոց- ներով և սարքավորումներով հնարավոր չի լինի ամբողջությամբ իրա- կանացնել թվային հեռարձակման պահանջներին համապատասխան ՀՀ ԱԺ գործունեության լիարժեք լուսաբանումը (ՀՀ ԱԺ նիստերի, հանձնաժողովների նիստերի, խորհրդարանական լսումների և այլն), ուստի՝ ՀՀ Ազգային ժողովի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով, խիստ անհրաժեշտ է 2016 թվականի բյու- ջեով վերագինել ՀՀ Ազգային ժողովը համապատասխան տեխնի- կական միջոցներով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխա- տեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
197.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ կառավարությանը հատկացնել 50 մլն դրամ ծրագրային բյուջետա- վորման վերաբերյալ վերապատրաստումների իրականացման համար: Հաշվի առնելով ամբողջությամբ ծրագրային բյուջետավորման անց- ման կարևորությունը՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեով այս գործընթացի աջակցությունը կարևոր ներդրում կլինի Հայաստանում բյուջետային գործընթացի բարելավման, պետական բյուջեի թափանցիկությունը, բյուջետային եկամուտների կառավարու- մը բարելավելու, բյուջետային ծախսերի արդյունավետությունը բարձ-	Առաջարկությունը չի ընդունվել: Ծրագրային բյուջե- տավորման գծով վերապատրաստումներն իրակա- նացվում են ՀՀ ֆինանսների նախարարության են- թակայության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ում, որին աջակցություն է ցուցաբերվում Գերմանիայի միջազ- գային համագործակցության ընկերության (GIZ) կող- մից: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագ- ծով 09 բաժնի 06 խմբի 01 դասի «02. Հանրային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		րացնելու առումով: Այս ծրագրով աջակցություն կցուցաբերվի հանրապետությունում ծրագրային բյուջետավորման գործունեությանը միտված գործունեություն ծավալող ԶԻ Այ Զեթ (GIZ) Հայաստան և մնացյալ այլ կազմակերպություններին, որոնք կվերապատրաստեն ՀՀ համապատասխան պաշտոնյաներին:	հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 110,106.9 հազ.դրամ:
198.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրել 1 մլրդ դրամ օդային պաշտպանության ոլորտի զարգացման և ամրապնդման լրկացիոն համակարգերի պահպանման, արդիականացման և նորերի ձեռքբերման համար: Այս ծրագրի իրականացման նպատակն է՝ նպաստել ՀՀ օդային անվտանգության և պաշտպանական կարողությունների բարձրացմանը : Այն կնպաստի ՀՀ պաշտպանական զորքերի անհրաժեշտ տեխնիկայով ապահովելուն, որն էլ իր հերթին կնպաստի ՀՀ սահմանների պաշտպանության պատշաճ և արդյունավետ իրականացմանը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
199.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ Երևանի քաղաքապետարանին հատկացնել 5 մլն դրամ, Ավան վարչական շրջանի կոյուղին տեխնիկական ստանդարտներին համապատասխանեցնելու համար: Այս ծրագրի շնորհիվ կբարելավվի Ավան վարչական շրջանի որոշ թաղամասերի կոյուղատարների ներկա վիճակը՝ համապատասխանեցնելով այն տվյալ թաղամասերում բնակչության թվի աճի շնորհիվ ստեղծված առկա պահանջներին:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
200.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացնել 300 մլն դրամ՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի համար համակարգչային տոմոգրաֆիա սարքի գնման և տեղադրելու նպատակով: Համակարգչային տոմոգրաֆիա սարքի գնման նպատակն է ժամանակակից սարքավորումներով վերազինել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնը և նպաստել ունիվերսալ բժշկական հետազոտության իրականացմանը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
201.	ՀՀ Ազգային ժողովի	ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացնել 20 մլն դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	«Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացման համար: Հաշվի առնելով հորմոնալ անալիզների անմատչելիությունը սոցիալապես անապահով ընտանիքների համար՝ այս ծրագրի իրականացմամբ սոցիալական ծանր պայմաններում հայտնված երեխաներին հնարավորություն կընձեռվի պետական միջոցների հաշվին ախտորոշվել և պարզել առկա առողջական խնդիրների բնույթը:	թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
202	ՀՀ Ազգային Ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	«Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրին հատկացվելիք գումարը ավելացնել 5 մլն դրամով: Նշված ավելացման նպատակն է աջակցել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին, օգնել նրանց՝ սահմանադրությամբ սահմանված կրթական իրավունքի իրացմանը, ինչպես նաև թեթևացնել անապահով ընտանիքների սոցիալական բեռը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
203	ՀՀ Ազգային Ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարության «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին հատկացված գումարը ավելացնել 500 մլն դրամով: Նշված ավելացման նպատակն է ապահովել Հայաստանում հանրային առողջապահական ծրագրերի վերարտադրողական բաղադրիչի գերակայությունը	Առաջարկությունը չի ընդունվել: «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվելիք ծառայությունների համար հատկացումները 2015 թվականի մակարդակի համեմատ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ավելացվել է շուրջ 112.7 մլն դրամով:
204	ՀՀ Ազգային Ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարության «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին հատկացված գումարը ավելացնել 100 մլն դրամով: Նշված ավելացման նպատակն է ապահովել Հայաստանում հանրային առողջապահական ծրագրերի վերարտադրողական բաղադրիչի գերակայությունը:	Առաջարկությունը չի ընդունվել: «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվելիք ծառայությունների համար հատկացումները 2015 թվականի մակարդակի համեմատ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ավելացվել է շուրջ 2.1 մլն դրամով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
205	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարության «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին հատկացված գումարը ավելացնել 300 մլն դրամով: Նշված ավելացման նպատակն է ապահովել Հայաստանում հանրային առողջապահական ծրագրերի վերարտադրողական բաղադրիչի գերակայությունը:	Առաջարկությունը չի ընդունվել: «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվելիք ծառայությունների համար հատկացումները 2015 թվականի մակարդակի համեմատ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ավելացվել է շուրջ 23.3 մլն դրամով:
206	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	Սոցիալական պաշտպանության ծրագրով հատկացված գումարները ավելացնել 50 մլն դրամով: Սոցիալական պաշտպանության ծրագրով նախատեսված սոցիալական փաթեթից օգտվելու հնարավորություն տալ նաև գիտնականներին, այդ թվում նաև երիտասարդ գիտնականներին:	Առաջարկությունը չի ընդունվել: Ներկայումս սոցիալական պաշտպանության ծրագրով նախատեսված սոցիալական փաթեթից օգտվելու հնարավորություն ունեն ինչպես ՀՀ ԳԱԱ աշխատակազմի և համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, այնպես էլ «Մատենադարան» ՊՈԱԿ-ի, «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» և «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող անձինք, այդ թվում՝ երիտասարդ գիտնականները:
207	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությանը հատկացնել 100 մլն դրամ հիպոթեքով բնակարան ստացող բազմազավակ ընտանիքներին աջակցելու նպատակով: Այս ծրագրի իրականացման շնորհիվ պետությունը կաջակցի սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովվելու հարցում՝ տրամադրելով որոշակի արտոնություն:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ կառավարությունը ժողովրդագրական քաղաքականության համատեքստում կարևորում է հանրապետության բնակչության տարբեր շերտերի բնակարանային ապահովության խնդիրը: Մասնավորապես, քննարկումների ավարտական փուլում է գտնվում ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրի նախագիծը, որի կարևորագույն բաղադրիչներից մեկը հանդիսանում է «Բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանով ապահովման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			պետական նպատակային ծրագիրը»: Այն նախատեսում է մի շարք ուղղություններով, այդ թվում՝ նոր կառուցապատված, երկրորդային շուկայից գնված, ինչպես նաև պատրաստի կոնստրուկցիաներից հավաքովի բնակարանների տրամադրում բնակարանի կարիք ունեցող ընտանիքներին: Ընդ որում բնակարանային ապահովման ծրագրի շահառուներ կարող են դառնալ նաև բնակարանի կարիք ունեցող բազմազավակ ընտանիքները: Ըստ նախնական քննարկումների բնակարանի կարիք ունեցող շահառուների թիվը տարեկան կտրվածքով կանխատեսվում է 2100 ընտանիք, իսկ հատկացումների չափը՝ շուրջ 3 մլրդ դրամ:
208	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ կառավարության «Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին» ծրագրին հատկացնել ևս 50 մլն դրամ: Աջակցելով արտասահմանի առաջավոր ԲՈՒՀ-եր ընդունված ուսանողներին՝ հնարավորություն կընձեռվի հանրապետությունը համալրել գրագետ և բանիմաց կադրերով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
209	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի գումարները՝ ավելացնելով անվճար համակարգում սովորող յուրաքանչյուր ուսանողի ամսական կրթաթոշակի չափը լրացուցիչ 5000 դրամով: Բարձրացնելով անվճար համակարգում սովորող ուսանողների կրթաթոշակը՝ կբարելավվի ուսանողության սոցիալական վիճակը, ինչպես նաև այն խթան կհանդիսանա ԲՈՒՀ-երում կրթության որակի, հետևաբար նաև՝ կրթության արդյունավետության բարձրացմանը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Լրացուցիչ ծախսը կկազմի 576.1 մլն դրամ:
210.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն»	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմա-	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	Նագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրի իրականացման համար տրամադրել լրացուցիչ 100 մլն դրամ: Գիտությունը պետության ամենաարդյունավետ, ռազմավարական ներդրումն է, որը թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ կտրվածքով բերում է մյուս բոլոր ճյուղերի առաջընթացի և ներդաշնակ զարգացման: Հայաստանում գիտության ֆինանսավորման ներկայիս մակարդակը հանգեցնում է մեր երկրի ունեցած հզոր գիտական ներուժի, բազմաթիվ փայլուն գիտնականների արտագաղթին՝ «ուղեղների արտահոսքին»: Այս արտահոսքը կանխելու, ինչպես նաև երկրի տնտեսության շարունակական զարգացում ապահովելու նպատակով խիստ կարևոր է գիտական հետազոտությունների հնարավորինս շատ ֆինանսավորումը:	կոմիտեի կողմից գիտական հետազոտությունների գնահատման և փորձաքննության ժամանակակից մեթոդաբանության կիրառմամբ անցկացված տարբեր մրցույթների արդյունքում ֆինանսավորվում են շուրջ 250 գիտական թեմաներ (հետազոտողների խմբեր): Հայաստանում գիտության զարգացման ներկայիս փուլում սա փոքր թիվ չէ. այն մի կողմից ապահովում է իսկապես մրցակցային միջավայրի առկայությունը, մյուս կողմից՝ թույլ է տալիս ֆինանսավորել արժեքավոր գիտական հետազոտությունները:
211.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 15 մլն դրամ: Նշված գումարն անհրաժեշտ է Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ մասնաշենքի 2015 թվականին սկսված ներքին հարդարման աշխատանքներն ավարտին հասցնելու և 2-րդ մասնաշենքի վերանորոգման համար, որը կնպաստի Արմաշ համայնքի աշակերտների համար կրթության անհրաժեշտ պայմանների բարելավմանը:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ մասնաշենքի 2015 թվականին սկսված ներքին հարդարման աշխատանքներն ավարտին հասցնելու և 2-րդ մասնաշենքի վերանորոգման նպատակով նախատեսվել է 20.0 մլն դրամ:
212.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման համար հատկացնել 20 մլն դրամ: Արմաշ համայնքի ներհամայնքային ճանապարհները վերջին անգամ ասֆալտապատվել է դեռևս խորհրդային ժամանակներում և ներկայումս գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Լինելով հայ-ադրբեջանական սահմանին մոտ, 90-ականների սկզբին ռմբակոծության հետևանքով գրեթե վերացել են նախկինում եղած ասֆալտի հետքերը: Անբարեկարգ ճանապարհների պատճառով համայնքի բնակչությունը կանգնում է բազմաթիվ խնդիրների առջև: Հաշվի առնելով Արմաշ համայնքի սահմանին շատ մոտ գտնվելու հանգամանքը՝ համայնքի	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Արմաշ համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման նպատակով նախատեսվել է 20.0 մլն դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ենթակառուցվածքների զարգացումը ձեռք է բերում ռազմավարական նշանակություն: Այս ծրագրի իրականացումը ոչ միայն կնպաստի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը, այլև՝ կկանխի համայնքից երիտասարդ կադրերի միգրացիան:	
213.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Թևան Պողոսյան	ՀՀ մշակույթի նախարարությանը ժամանակակից բալետային արվեստի զարգացման նպատակով տրամադրել 10 մլն դրամ: Ծրագրի նպատակն է՝ նպաստել հանրապետությունում ժամանակակից բալետի զարգացմանը, ինչպես նաև պահպանել այս ոլորտում արդեն իսկ ձեռք բերված արժեքները եւ միջոցները՝ դնելով այն զարգացման նոր ուղու վրա: Ելնելով բալետային արվեստի յուրահատկությունից, այն է՝ միայն շարունակական եւ հետեւողական աշխատանքների շնորհիվ է հնարավոր արվեստի այս տեսակի զարգացումն ապահովելը, քանի որ յուրաքանչյուր չմարզված օրը նախկինում եղածը վերականգնելու համար հետագայում պահանջում է կրկնակի ռեսուրսներ եւ միջոցներ, ապա՝ յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը որոշակիորեն կկանխի երկրում բալետային արվեստի անկման ընթացքը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
214.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» պատգամավորական խմբակցություն, պատգամավոր Վահե Էնֆիաջյան	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Շոթա Ռուսթավելու անվան թիվ 23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) վերանորոգման ծախսերի համար նախատեսել 14 960 326 դրամ: Կից ներկայացնում ենք կատարվող ծախսերի նախահաշիվը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
215.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2016թ համար նախատեսված տնտեսական աճը (102,2%) ցածր է: Ուղերձում այն բացատրված է «արտաքին զարգացումներով» (էջ 74): Մինչդեռ ՀԲ տվյալներով աշխարհի տնտեսության հավելածը վերջին	2016 թվականի տնտեսական աճը «արտաքին զարգացումներով» բացատրված լինելու կապակցությամբ.

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տարիներին կազմել է՝ 2010թ՝ 4.1%, 2011թ՝ 2.9%, 2012թ՝ 2.3%, 2013թ՝ 2.4%, 2014թ՝ 2.5%: 2015թ տնտեսական աճը, ԱՄՀ գնահատականներով, սպասվում է 3.3%, իսկ 2016-ի աճը՝ 3.8% (http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/update/02/). ԵՏՄ տարածքում Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը 3-5% աճ են նախատեսում, ԱՄՆ-ն 3,2% (2015թ 3,5%-ից), Չինաստանը 6,9% (2015թ՝ 7,1%-ից), ԵՄ երկրները 2,1% (2015թ՝ 1,6%-ից), (http://ec.europa.eu/economy_finance/publications/european_economy/2015/pdf/ee1_en.pdf), Վրաստանը՝ 3% (2015թ առաջին կիսամյակ՝ 2.6%, 2014թ՝ 4.7%) (http://www.reuters.com/article/2015/09/23/georgia-gdp-idUSL5N11T34420150923), Ադրբեջանը 2,8% (2015թ առաջին կիսամյակ՝ 5,7%) (http://www.azernews.az/business/88109.html), Թուրքիան՝ 3.5% (2015թ՝ 3%) (http://www.hurriyetdailynews.com/world-bank-cuts-turkeys-2016-2017-growth-forecasts-over-political-outlook.aspx?pageID=238&nID=84811&NewsCatID=344) և Իրանը 4.4% (2015թ՝ 0.8%)։ Փաստորեն Հայաստանի ցուցանիշը վատագույնն է և իրականում 2016թ վատ արտաքին զարգացումներ չկան։ Առաջարկվում է տնտեսական հավելաճը բարձրացնել մինչև 6-6.5% և դրան համապատասխան ներդրումները՝ մինչև ՀՆԱ 15-17%:	Նկատառումը հաշվի է առնվել։ Ուղերձում «արտաքին զարգացումներով» ասելով նկատի ենք ունեցել Ռուսաստանի տնտեսական աճի վերաբերյալ կանխատեսումները, ինչպես նաև մետաղների գների վարընթաց կանխատեսումները։ Միտքը խմբագրվել է։ Ուղերձում այն ներկայացվել է հետևյալ խմբագրությամբ. «2016 թվականին տնտեսական աճը ավելի համեստ կլինի՝ պայմանավորված հիմնականում արտաքին զարգացումներով (մասնավորապես՝ Ռուսաստանի տնտեսության և պղնձի համաշխարհային գների անկմամբ)»։ Այստեղ հարկ է նշել, որ հարցադրման մեջ ներկայացված են գործընկեր գրեթե բոլոր երկրների տնտեսական աճերի կանխատեսումները բացառությամբ Ռուսաստանի Դաշնության, մինչդեռ Ռուսաստանի տնտեսության կապը մեր տնտեսության հետ շատ ավելի մեծ է, քան որևէ այլ առանձին երկրինը, ինչը դրսևորվում է ՕՌԻՆ-ում, արտահանման մեջ և դրամական փոխանցումներում՝ պայմանավորված Ռուսաստանի մեծ մասնաբաժնով։ Նշված՝ http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/update/02/pdf/0715.pdf ԱՄՀ հրապարակման մեջ ներկայացված են նաև Ռուսաստանի Դաշնության տնտեսական աճի կանխատեսումները՝ որտեղ դրանք ճշգրտվել են նվազման ուղղությամբ, 2015թ. համար 0.4%-ով, իսկ 2016թ. համար՝ 0.8%-ով։
216.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բացարձակապես անհիմն ու անտեղի է 2016-ի տնտեսական աճի գնահատման համար հիմնվել ԱՄՀ 2016-ի հուլիսյան կանխատեսումների վրա։ Արժույթի միջազգային հիմնադրամի «Համաշխար-	2016 թ. տնտեսական աճը գնահատվել է ոչ միայն ԱՄՀ 2016-ի հուլիսյան կանխատեսումների հիման վրա, այլ հաշվի են առնվել նաև տնտեսական աճի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հային տնտեսական հեռանկարներ» հրապարակումների 2015 թվականի հուլիսյան գնահատականների համաձայն՝ համաշխարհային տնտեսական աճի համար կանխատեսվում է նախորդ տարվա համեմատ ավելի ցածր մակարդակ: Ոչ սուտ է (չես կարողանում հավատալ, որ բյուջետային ուղերձի այս հատվածը շարադրողը պարզապես ստել է): Իր հուլիսյան գնահատականում ԱՄՀ 2016-ին կանխատեսում է 3.8% աճ, 2015-ի 3.3-ի փոխարեն (տես՝ http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/update/02/): Ընդհանրապես 105-107 էջերի շարադրանքը պարզապես սուտ է:	վրա ազդող մի շարք այլ գործոններ: Ի դեպ նշենք, որ 2015թ. առաջին կիսամյակի ՀՆԱ –ի ցուցանիշի ամփոփումը ցույց է տվել, որ եթե հանենք գյուղատնտեսության և հանքագործության բարձր աճերը, որոնք իրենց բնույթով ժամանակավոր են, ՀՆԱ-ի աճը կլիներ բավականին ցածր, որն ի դեպ բացատրվում է Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների զգալի նվազման պայմաններում ներքին տնտեսությունում պահանջարկի վրա բացասական ազդեցությամբ, ինչպես նաև դեպի Ռուսաստան արտահանման նվազմամբ/հունվար սեպտեմբերին 27.8%/: ԱՄՀ «Համաշխարհային տնտեսական հեռանկարներ» հրապարակումների 2015թ. հուլիսյան գնահատականների կապակցությամբ. Ուղերձի այս մասում « նախորդ տարվա նկատմամբ» արտահայտությամբ ներկայացվել են ոչ թե 2016թ.-ի զարգացումները 2015թ-ի նկատմամբ, այլ 2015թ.-ը 2014թ.-ի նկատմամբ: Այս կապակցությամբ կատարվել է հստակեցում, նշված տեղում «նախորդ տարվա նկատմամբ» արտահայտությունը փոխարինվել է «2014 թվականի նկատմամբ» արտահայտությամբ:
217.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2016թ գյուղատնտեսության 4% աճը լուրջ հիմնավորում չունի ուղերձում: Ընդհանուր ձևով այն ներկայացված է իբրև իրականացվող ծրագրերից ակնկալվող արդյունք: Հաշվի չի առնված այն, որ վերջին 15 տարիների գյուղատնտեսության ոլորտում թվերն այնքան են ուռճացված, որ հետագա վիճակագրական խեղաթյուրումները դժվարացել են: Պետք է հասկանալ, 2016-ին այդ ո՞ր ներդրումների հաշվին է, որ գյուղատնտեսությունն աճելու է:	Գյուղատնտեսության աճը կանխատեսվում է ներուժային մակարդակին համահունչ, որն ընդամենը 4% է, դա նշանակում է, որ կառավարության քաղաքականության փոփոխությունների բացակայության պայմաններում անգամ, այսինքն՝ նախորդ տարիներին իրականացվող ծրագրերի շարունակականության պահպանման պայմաններում գյուղատնտեսությունը կաճի 4%-ով: Ինչ վերաբերում է ներդրումներին՝

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			2015թ հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսության ոլորտում իրականացված կապիտալ շինարարության ծավալները աճել են 29.2%-ով, որն իր լազավորված ազդեցությունը կթողնի նաև 2016թ. գյուղատնտեսության ցուցանիշների վրա:
218.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ուղերձում 2016-ի համար կանխատեսված է, որ շինարարության աճի տեմպը կպահպանվի պետական բյուջեի միջոցների հաշվին: Ավելի ուշ նկատում ենք, որ նման միջոցներ (լուրջ) չկան (տես առարկությունը հաջորդիվ):	Ուղերձում նման շարադրանք չկա: Հակառակը, ուղերձում նշվում է, որ շինարարության աճի տեմպը կպահպանվի մասնավոր ներդրումների հաշվին, այլ ոչ թե պետական բյուջեի միջոցների հաշվին: Մասնավորապես. նշվում է, «2016թ. կանխատեսվում է ճյուղի աճի պահպանում (2015թ. կանխատեսվում է 1% աճ), ինչը հիմնականում կուղեկցվի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք շինարարության ծավալների կրճատմամբ և մասնավոր ներդրումների աճով»:
219.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ուղերձում մանրաձախ առևտրի շրջանառության անկումը 2015-ին խորը վերլուծած չէ: Անհնարին է տնտեսությունն աճի (հատկապես գյուղատնտեսությունը), արտահանումը մնա նույն տեղում, եկամուտներն աճեն, խնայողությունները լճանան և առևտուրն անկում ապրի: Հարց է ծագում. ու՞ր են փողերը:	Ներկայացված փաստաթղթի շրջանակներում վերլուծվում են հիմնականում այն ցուցանիշները, որոնք դրվում են ՀՀ պետական բյուջեի հիմքում: Այդ տեսանկյունից ՀՆԱ-ի կանխատեսման համար ցուցանիշները վերլուծվել են ճյուղային բացվածքով, ինչը և ներկայացված է փաստաթղթում: Ինչ վերաբերում է առևտրի ենթաճյուղերի առանձին վերլուծությանը, այդ նպատակով իրականացվել են համապատասխան խորը վերլուծություններ, դրանց հիման վրա կատարվել են եզրահանգումներ, որոնք արտացոլվել են ուղերձում, մասնավորապես. նշվել է, որ առևտրի շրջանառության ծավալները նվազել են հիմնականում մանրաձախ առևտրի շրջանառության ծավալների նվազման հետևանքով, ինչի պատճառ են հանդիսացել դրամական փոխանցումներով պայմանավորված իրական տնօրինվող եկամտի անկումը և վարկավոր-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ման իրական ծավալների նվազումը: Միաժամանակ հայտնում ենք, որ 2015թ. հունվար-հունիս ամիսներին տնօրինվող եկամուտներն անվանական արտահայտությամբ աճել են 7.9%-ով, առևտուրը՝ ըստ ավելացված արժեքների անվանական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.8%-ով:
220.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ուղերձում նշված է. «2014 թվականին արձանագրվել է միջին աշխատավարձի 8.2% աճ, իսկ 2015 թվականի հունվար-հուլիսին՝ 2015 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աշխատավարձերն աճել են 9.9%-ով»: Սրանք սխալ թվեր են և միայն մասնակիորեն են արտահայտում այն, ինչ իրականում տեղի է ունեցել: Բանն այն է, որ ըստ ԱՎԾ պետի 2014-ին և 2015-ին աշխատավարձի աճի մեջ մտցված են պարտադիր կուտակայանի թվերը: Սա իրական եկամուտ չէ: Մասնագիտորեն ասած ԱՎԾ-ն պետք է դրանք դիսկոնտավորեր և միայն այդ չափով հաշվի առներ եկամուտների աճի մեջ: Ի դեպ, 2016-ին այդ աճը վերանայու է:	Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տեղեկատվության, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխության արդյունքում, 2012-2013թթ. աշխատավարձի ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով, 2012թ. համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ գործող մեթոդաբանության՝ գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկային դրույքաչափերը կիրառելու մեթոդով: Նոր մեթոդաբանությամբ հաշվարկված աշխատավարձերում ներառվում են միայն գործատուի կողմից նախկինում վճարված պարտադիր սոցապահովության վճարների հաշվարկային թվերը, իսկ պետության կողմից կատարված հատկացումները չեն ներառվում նշված հաշվարկներում: Մյուս կողմից, 2014 և 2015 թվականների աշխատավարձերի ցուցանիշները համադրելի են, քանի որ նշված տարիներին դրանք հաշվարկվել են նույն մեթոդաբանությամբ:
221.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Տնօրինվող եկամտի և իրական սպառման տարբերությունը բացատրվում է անհուսալի վիճակագրությամբ ինչպես տնօրինվող «իրական» եկամտի մասով, այնպես ԿԲ անհասկանալի վիճակագրությամբ ավանդների դինամիկայի առումով:	Հարցադրումը անհրաժեշտ է հստակեցնել: Պարզ չէ, թե ինչ է նշանակում «ԿԲ անհասկանալի վիճակագրությամբ ավանդների դինամիկայի առումով» արտահայտությունը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
222.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ուղերձում (էջ 84) անհասկանալի է կապիտալ ներդրումների 3.4% աճը 2016-ին:	Կապիտալ ներդրումների աճը պայմանավորված է հետևյալ գործոններով. 1. 2015 թվականի ցածր մակարդակով (բազայի էֆեկտ), 2. 2015 թվականին կատարվել են մի շարք փոփոխություններ ուղղված հարկային միջավայրի բարելավմանը՝ ընդլայնվել է հարկերից ազատված ներմուծվող ներդրումային ապրանքների ցանկը, հարկային արտոնություններ են սահմանվել նաև սահմանափակ գյուղերի մասով, Դիլիջանի դպրոցի մասով. 3. ԵԱՏՄ անդամ մյուս երկրների համեմատ գործարարությամբ զբաղվելու ավելի բարենպաստ դիրքով (Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը 2016» զեկույց):
223.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բյուջետային ուղերձը գործարար ու ներդրումային միջավայրերի բարելավման, տեսչական բարելավումների մասին ընդհանուր են, տարեցտարի կրկնվող: Առաջարկվում է թողնել աղը՝ այն է ի՞նչ է կոնկրետ կատարվելու:	Գործարար միջավայր: Ինչպես նշվել է ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծում ՀՀ գործարար միջավայրի բարելավման շրջանակներում մշակվելու է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների տարեկան ծրագիրը՝ նպատակ ունենալով ստեղծելու ՀՀ-ում ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար բարենպաստ պայմաններ, միաժամանակ ապահովելով «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավումը: Նշված նախագիծը ներկայումս գտնվում է մշակման փուլում: Նշենք, որ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 7 ծրագիր, որտեղ յուրաքանչյուր տարի ներառվում են կոնկրետ միջոցառումներ բիզնեսի գործունեու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			թյանը խոչընդոտող խնդիրների լուծման նպատակով: Կարևոր ենք համարում նշել նաև, որ վերոնշյալ տարեկան ծրագրերում ներառված միջոցառումների իրականացման արդյունքում է, որ էապես կրճատվել են լիցենզիաների քանակը, կրճատվել են հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային վճարումների կատարման պարբերականությունները, տնտեսավարողներին ընձեռվել է հնարավորություն հարկային հաշվետվությունները ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով, ներդրվել են պետական վճարումների, մաքսային հայտարարագրման և մաքսային ձևակերպումների էլեկտրոնային համակարգեր, հիմնվել է իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման կենտրոնը, ներդրվել է անհատ ձեռնարկատերերի հաշվառման, իրավաբանական անձանց պետական գրանցման էլեկտրոնային համակարգը, որի արդյունքում ընկերության հիմնադրման համար պահանջվում է ընդամենը 15 րոպե, հստակեցվել և կրճատվել են շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ գործընթացները և ժամկետները, ինչպես նաև ներդրման գործընթացում է գտնվում շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգը և այլն: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք, որ 2016թ.-ի ընթացքում իրականացվելիք գործարար

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	<< կառավարության դիրքորոշումը
			միջավայրի բարելավմանն ուղղված հստակ միջոցառումներն ամրագրված կլինեն համապատասխան ծրագրում: Միևնույն ժամանակ, նշենք նաև, որ նախարարության կողմից գործարար միջավայրի բարելավմանն առնչվող միջոցառումները չեն սահմանափակվում միայն վերոնշյալ ծրագրերի իրագործմամբ: Նախարարությունը գործարար և ներդրումային միջավայրը կանոնակարգող իրավական ակտերի ուսումնասիրության, գործարար համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումների, նախարարությունում գործող «գործարար միջավայրին առնչվող» թեժ գծին ներկայացված առաջարկությունների/բողոքների հիման վրա պարբերաբար հանդես է գալիս համապատասխան նախաձեռնություններով: Կարևոր է նաև նորմատիվ իրավական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունների տրամադրումը՝ նպատակ ունենալով ապահովելու գործարար և ներդրումային միջավայրի գրավչության ուղղությամբ ձեռք բերված հաջողությունների շարունակականությունը՝ թույլ չտալով նոր անցանկալի կարգավորումների ընդունումը: Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գործարար միջավայրին առնչվող կոնկրետ միջոցառումներն

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			արտացոլվում են ՀՀ կառավարության կողմից ընդունվող գործարար միջավայրի բարելավման տարեկան ծրագրերում, իսկ տարեկան ծրագրերից դուրս նախաձեռնություններն իր իրավասությունների շրջանակներում նախարարությունն իրականացնում է անմիջապես՝ կոնկրետ խնդրի բացահայտման ժամանակ, և նախապես որոշակի միջոցառումների կանխորոշումը և վերջիններիս բյուջեի նախագծում սահմանումը նպատակահարմար չենք համարում: Ներդրումային միջավայր: Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ: Տեսչական բարեփոխումներ: Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
224.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	ՓՄՁ-երի մասով պետք են ոչ թե ընդհանուր խոսքեր (տես ուղերձի 4-6 էջերը), այլ կոնկրետ վերլուծություն (օրինակ, դրանց ՀՆԱ-ում և բյուջեում տեսակարար կշռի դինամիկան և այլն) և կոնկրետ պարտավորություններ (օրինակ, կառավարությունը պարտավորվում է թույլ չտալ մանրածախ առևտրի ոլորտում ՓՄՁ-երի տեսակարար կշռի անկում):	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
225.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ուղերձի տեխնոլոգիական զարգացում բաժինը թույլ է և ընդհանուր:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
226.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Որոշակի կոնկրետ նյութ կա թերևս որակի ենթակառուցվածքների բարելավման բաժնում, բայց այստեղ էլ բիզնես համույթը պետք է իմանա՝ ի՞նչ, ե՞րբ և ի՞նչքան:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
227.	ՀՀ Ազգային ժողովի	Արդյունաբերական քաղաքականության բաժինը զգալիորեն կրկնում է	ՀՀ կառավարության կողմից հավանության արժանա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Հրանտ Բագրատյան	անցյալ տարվա բյուջետային ուղերձի թեզերը: Ի՞նչ կարիք կա կրկնելու:	ցած և ներկայումս իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը» սկիզբ դրեց ոլորտային ռազմավարությունների իրականացմանը, որը նախատեսված է մինչև 2020 թվականը: Այդ առումով բյուջետային ուղերձը նպատակ ունի հակիրճ ներկայացնելու արդեն իսկ իրականացվող արտահանմանն ուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականության շարունակականության և ռազմավարությամբ նախանշված դրույթների իրագործման անհրաժեշտության գաղափարը հաջորդ տարվա կտրվածքով: Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը և արդեն իսկ կիրառվող գործիքներին զուգընթաց նախատեսվում է ներդնել պետական աջակցության նոր գործիքներ՝ ուղղված արտահանման ներուժ պարունակող արդյունաբերական կազմակերպությունների խրախուսմանը՝ արտահանվող ապրանքների տեսականու և ծավալների ավելացման նպատակով:
228.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	էջ 14՝ ի՞նչ է նշանակում SS ոլորտում նոր ստեղծվող, սկսնակ հավաստագրված տնտեսավարող սուբյեկտներին հարկային արտոնությունների տրամադրումը, ինչն իր հերթին ևս կխթանի ոլորտի սկսնակ ընկերությունների ձևավորմանը: Խոսքը նոր արտոնությունների մասին է, թե եղածի:	Խոսքը 2014թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրական փաթեթով տրվող հարկային արտոնությունների մասին է /եկամտահարկի 10% և շահութահարկի 0% դրույթաչափերի կիրառում հավաստագրված սկսնակ տնտեսավարող սուբյեկտների համար/, ինչը կարևոր խթան է հանդիսանում ոլորտում նոր ընկերությունների և աշխատատեղերի ստեղծման համար: Օրենքի կիրարկման արդյունքում ընդամենը մի քանի ամիսների ընթացքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 60 նոր

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ընկերություններ և շուրջ 250 նոր աշխատատեղեր: Խոսքն այստեղ ոչ թե նոր հարկային արտոնությունների տրամադրման, այլ ՏՏ ոլորտում նոր ստեղծվող, հավաստագրված տնտեսավարող սուբյեկտների համար գործող օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների տրամադրման շարունակականության մասին է: Այլ կերպ ասած՝ խոսքը առաջիկա տարվա ընթացքում ոլորտում գործունեությունը նոր սկսող տնտեսավարող սուբյեկտների հավաստագրման միջոցով օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված հարկային արտոնություններից օգտվող հարկ վճարողների շրջանակի ընդլայնման մասին է:
229.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Էջ 15-17 – զբոսաշրջության ոլորտը պետք է լինի կոնկրետ, առարկայական:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
230	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Տարածքային կառավարման ու ինքնակառավարման բաժինը նույնպես թույլ է ստացվել: Օրինակ, երբ որ խոսում ենք նոր ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրման մեխանիզմի մասին պետք է կոնկրետ նշել առարկան: Ի՞նչը: Բացի այդ առաջարկում եմ դադարեցնել խոսակցությունները համայնքների խոշորացման մասին: Ներկա պատերազմական պայմաններում շուրջ 40 համայնք գտնվում են ամենօրյա կրակի տակ: Ի՞նչ խոշորացման մասին է խոսքը:	Ֆինանսական համահարթեցման նոր համակարգը վերաբերվում է պետության կողմից համահարթեցման սկզբունքով համայնքներին տրվող պաշտոնական դրամաշնորհներին: Մշակման փուլում է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որով առավել նպատակային և արդարացի բաշխում է ապահովվելու՝ հաշվի են առնվելու համայնքի եկամտային ունակությունները և ծախսային կարիքները: Համայնքների խոշորացումն և միջհամայնքային միավորումների ձևավորումը նպատակաուղղված է կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ռեսուրսների (բնական, ֆինանսական, մարդկային) առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչը, մեր կարծիքով, կազմակերպչա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			կան առումով ավելի նպաստավոր պայմաններ կստեղծի խոշորացվող համայնքներում: Բացի այդ, սահմանամերձ համայնքների նկատմամբ դրսևորվելու է տարբերակված մոտեցում, և ներկա ժամանակահատվածում ընդհանրապես չի քննարկվում հակամարտության շփման գոտում գտնվող համայնքների խոշորացման հարցը:
231.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Միգրացիայի և գյուղատնտեսության բաժինները հիմնականում կրկնում են այն, ինչ կար անցյալ տարի: Դրա հետ կապված առաջարկվում է միգրացիայի բաժնում նախատեսել գործուն մեխանիզմներ հայրենիքում հայրենադարձների համար հատուկ վարկային, հարկային արտոնությունների մասով: Մարդիկ պետք է ի վիճակի լինեն Հայաստանում գործարարությամբ զբաղվել, ՓՄՁ հիմնել և այլն: Գյուղատնտեսության մասով առաջարկվում է վարկային, ինչպես նաև պարարտանյութերի ու դիզվառելիքի մասով սուբսիդիաները փոխարինել դրամական օժանդակությամբ, բերքի գնման երաշխավորված ծավալների ու գների մեխանիզմներով:	Հայտնում ենք, որ հայրենադարձների համար հատուկ վարկային, հարկային արտոնությունների տրամադրման հարցը նպատակահարմար է կարգավորել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքով, որի նախագիծը գտնվում է ՀՀ Ազգային Ժողովում: Գյուղատնտեսության մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, մատչելի գներով հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի մատակարարման ծրագրերի շարունակման նպատակը եղել է այն, որ գյուղատնտեսության համար նախատեսվող ներդրումները օգտագործվեն նպատակային՝ գյուղատնտեսության ոլորտում: Հաշվի առնելով գյուղատնտեսությունում տնտեսավարողների սոցիալական պայմանները դրամական օժանդակության մեխանիզմների կիրառումը կհանգեցնի հատկացվող ռեսուրսների հնարավոր ոչ նպատակային օգտագործմանը: Հետևաբար նպատակահարմար է գտնվել օժանդակությունը ուղղել գյուղատնտեսական արտադրության պայմանների բարելավմանը՝ մատչելի պայմաններով կարևորագույն ռեսուրսների

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			մատակարարման միջոցով: Ինչ վերաբերում է գնման երաշխավորված ծավալների ու գների մեխանիզմների կիրառմանը, ապա վերջիններս առավել բարդ են և դրանց ներդրման մեխանիզմները և նպատակահարմարությունը կարիք ունեն առավել բազմակողմանի քննարկման և հիմնավորման, որի իրականացումը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի շրջանակներում իրատեսական չէ:
232.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Էներգետիկայի բաժինն ավելի կոնկրետ ու գործնական է շարադրված: Առաջարկում ենք կոնկրետ գրել նոր ատոմակայանի շինարարության նախապատրաստման աշխատանքների մասին (այս մասով կրկնված է անցյալ տարվա ընդհանրական տեքստը) և ցույց տալ, թե կոնկրետ ի՞նչ է արվելու ոչ ավանդական էներգետիկայի զարգացման ուղղությամբ:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
233	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ջրային տնտեսություն բաժնում առաջարկվում է կոնկրետ շարադրել կառավարման բարեփոխումներ ենթակետը:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
234.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Տրանսպորտ և կապ բաժնում առաջարկվում է, նախ, հստակ տեղեկատվություն տրամադրել Հյուսիս-Հարավ ճանապարհի շինարարության և 2016թ այստեղ նախատեսվող ծախսերի վերաբերյալ:	Տեղեկատվությունը կտեղադրվի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կայքում:
235	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ավիացիայի ոլորտում նախատեսված բարեփոխումները սովորական, հերթապահ միջոցառումներ են: Այդ ամենի փոխարեն լավ կլիներ, օրինակ, նախատեսել ավիանավթի շուկայի ազատականացում, մենաշնորհի վերացում և օդանավակայանների հսկողությունից ավիանավթի մատակարարման գործընթացի դուրսբերում:	Հայտնում ենք, որ ավիապառելիքի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն մենաշնորհային չէ և նման գործունեությամբ կարող է զբաղվել յուրաքանչյուր ներկրող կազմակերպություն: Դա է վկայում այն, որ տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի Հանրապետություն ավիապառելիք ներմուծվել է տարբեր ընկերությունների կողմից: Ինչ վերաբերվում է օդանավակայանների հսկողությունից ավիապառելիքի մատակարարման գործընթացի դուրսբերման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			խնդրին, ապա բացի ներմուծումից լրացուցիչ ընկերություններ երբևիցե հետաքրքրություն չեն դրսևորել երկրի ներսում ավիավառելիքի առջ ու վաճառքով զբաղվելու հարցում: Պատրաստակամություն ենք հայտնում քննարկման առարկա դարձնելու ցանկացած նմանատիպ դեպք:
236	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ուղերձի քաղաքաշինության բաժնում նյութ չկա. 3 նախադասություն:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
237	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Կրթության ոլորտում անհրաժեշտ է բարելավել ծրագիրը նկատի ունենալով այն, որ ոլորտը գեներացնում է ՀՆԱ և բյուջետային եկամուտներ, ինչպես նաև արմատապես փոխել ոլորտի ֆինանսավորման մեխանիզմները: Մասնագիտական կրթության ենթաբաժնում նպատակահարմար է կոնկրետ առաջադրանքներ սահմանել մասնագետների քանակի ու որակի (ըստ մասնագիտությունների) մասով:	Ներկայումս շրջանառության մեջ է դրվել ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրի նախագիծը, որի շրջանակներում էլ կքննարկվի բարձրացված հարցը:
238	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Գիտության ոլորտը համարյա թե չի ստացվել: Այսպես, խնդիր է դրվում «գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը»: Նոր ենք անելու: Առաջարկում ենք նաև կոնկրետ առաջադրանքներ սահմանել պատրաստվող կադրերի, թեմատիկ ֆինանսավորման, ակնկալվող արդյունքների մասով:	Գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը շարունակական գործընթաց է և իր մեջ ներառում է գիտական կադրերի պատրաստման համակարգի զարգացումը ևս: Պայմանագրային (թեմատիկ), ինչպես նաև ֆինանսավորման այլ ձևերով իրականացվող ծրագրերում մշտապես ներառվում են կանխատեսումներ ակնկալվող արդյունքների վերաբերյալ:
239	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առողջապահության բաժնում պետք է լուծել ֆինանսավորման մեխանիզմների արմատական բարելավման և դեղերի ազատ շուկայի ձևավորման հիմնախնդիրները:	Առողջապահության բնագավառում ֆինանսավորման մեխանիզմների բարելավման հարցերը քննարկվում են ՀՀ կառավարությունում, իսկ դեղերի ազատ շուկայի ձևավորման հիմնախնդիրներին վերաբերվող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			առանձին հարցեր ներառված են «Դեղերի մասին» ՀՀ օրենքի նախագծում:
240	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Մշակույթի ոլորտի ծրագիրը պետք է լրացնել ծրագրային ֆինանսավորման, մրցույթային հիմունքներով պետական պատվերի տեղաբաշխման մեխանիզմների ներդրման պարբերություններով, նշել այդ ամենից հետո ոլորտի ֆինանսավորման կառուցվածքը ըստ բաժինների:	ՀՀ մշակույթի նախարարությունը դեռևս 2004 թվականից որպես պիլոտային ընդգրկվել է ծրագրային բյուջետավորման բարեփոխումների գործընթացում: Մշակույթի ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան («ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի N N 13,14 հավելվածներ): Մշակութային ժառանգության պահպանման, ժամանակակից արվեստի զարգացմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը պետական բյուջեից իրականացվում է սուբսիդիաների, դրամաշնորհների տեսքով, իսկ հուշարձանների վերականգնման, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և գրքերի հրատարակման ծրագրերը՝ մրցույթային հիմունքներով՝ պետական պատվերի տեղադրմամբ: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեում մշակույթի ոլորտի ֆինանսավորման կառուցվածքը ըստ խմբերի և դասերի (ծախսային ծրագրերի) ներկայացված է «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 1 հավելվածի 8-րդ բաժնում:
241.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Էական փոփոխության կարիք ունի ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության բաժինը: Ե՞րբ է վերջ տրվելու օլիգարխ-ինչ-որ սպորտաձևի ֆեդերացիա սկզբունքը, ե՞րբ է դեմոկրատաց:	Համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթների, ֆեդերացիաների ղեկավար կազմը (նախագահ, քարտուղար) առաջարկվում և ընտրվում է մարզական կազմակերպության և կոնֆերանսի մասնակիցների կողմից՝ բաց քվեարկությամբ (դեմոկրատական սկզբունքներով): Լիազոր պետական մարմինների միջամտությունը

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ բացառվում է, քանի որ այդ գործընթացը միջազգային մարզական կառույցների (ՄՕԿ, միջազգային մարզաձևերի ֆեդերացիաներ) կողմից խիստ վերահսկվում է և կարող են կիրառել պատժամիջոցներ, ընդհուպ մինչև տարբեր մարզական միջոցառումներից զրկելը: Ինչ վերաբերում է տարբեր գործարարների կողմից պետական բյուջեից ֆինանսավորվող ֆեդերացիաների նախագահներ ընտրվելուն և լրացուցիչ ֆինանսական միջոցների ներդրմանը, ապա պետք է փաստել, որ որոշ մարզաձևերում մեր հաջողությունների մի մասը պայմանավորված է հենց այդ ներդրումներով: Գրեթե բոլոր երկրներում մարզական ֆեդերացիաների նախագահները, ինչպես նաև մարզական ակումբների սեփականատերերը հաջողակ գործարարներ են: Մեր համոզմամբ դա ճիշտ բանաձև է՝ անկախ այդ երկրների զարգացման մակարդակից:
242.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյան	Բնապահպանության ոլորտի շարադրանքը կարիք ունի լրացվելու կոնկրետ թվերով, սինթետիկ ցուցանիշներով:	Առաջարկությունն ընդունվել է և բյուջետային ուղերձում կատարվել են համապատասխան լրացումներ:
243.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյան	Հարկային և մաքսային ոլորտի շարադրանքը շատ լուրջ բարելավման կարիք ունի: Այսպես, լավ կլիներ մոտավորապես կանխագուշակել ՀՀ տնտեսության կառուցվածքի էվոլյուցիան առաջիկա տարիներին ընդհանրապես և 2016-ին մասնավորապես և ըստ այդմ հիմնավորել հարկային ու մաքսային փոփոխությունների դինամիկան:	2016 թվականի բյուջետային ուղերձի՝ ՀՀ կառավարության զեկույցի մասում նկարագրվել են հարկային և մաքսային քաղաքականությանը և վարչարարությանը վերաբերող՝ առաջիկա տարվա ընթացքում իրականացման ենթակա միջոցառումները: Ընդ որում, նշյալ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը բխում է ինչպես ՀՀ կառավարության ծրագրից, այնպես էլ ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Այս առումով գտնում ենք, որ բյուջետային ուղերձի վերոնշյալ մասում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ դրանում ամրագրված միջոցառումների իրականացումը, ըստ էության, համապատասխանում է առաջիկա տարիներին ՀՀ տնտեսության զարգացման նպատակով ՀՀ կառավարության կողմից որդեգրված ուղղություններին և սկզբունքներին:
244.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ճիշտ կլինի տալ 2016-ին հարկային մուտքերի կառուցվածքի դինամիկան, հայտարարել և ներդնել ինվոյսներով մաքսազերծում կազմակերպելու մեխանիզմների մասին:	Գործարքի գնի հիման վրա ներմուծվող ապրանքների մաքսազերծման ընթացակարգերը ներդրված էին ինչպես մինչև ՀՀ-ի ԵՏՄ-ին անդամակցությունը, այնպես էլ ԵՏՄ-ին անդամակցությունից հետո: Մասնավորապես, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է Միության անդամ պետությունների միջև կնքված «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի դրույթներին համապատասխան, որով սահմանված են նաև Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդներն ու դրանց կիրառման հերթականությունը: Մաքսային արժեքի որոշման մեթոդները վեցն են՝ - գործարքի գնի հիման վրա ապրանքների մաքսային արժեքի որոշում, - նույնական ապրանքների գործարքի գնի որոշման մեթոդ, - համանման ապրանքների գործարքի գնի որոշման մեթոդ, - հանման մեթոդ,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			- գումարման մեթոդ, - պահուստային մեթոդ: Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի հիման վրա հնարավոր չէ որոշել, ապա այդպիսի ապրանքների մաքսային արժեքը որոշվում է այլ մեթոդներով՝ ըստ վերը ներկայացված հերթականության, սակայն հայտարարատուն (մաքսային ներկայացուցիչը) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման ժամանակ իրավունք ունի փոխել հանման ու գումարման մեթոդների կիրառման հերթականությունը: Հարկ ենք համարում նշանել նաև, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ ներմուծված ապրանքների ընդհանուր արժեքի 66,5 տոկոսի մաքսային արժեքը որոշվել և մաքսային վճարները հաշվարկվել են գործարքի գնի մեթոդի հիման վրա:
245	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Լուրջ միջոցառումներ պետք է նախատեսել մաքսային վիճակագրության մասով: Այսպես, 2015-ին ՀՀ մաքսային վիճակագրության և ԵԱՏՄ մաքսային վիճակագրության մեջ անդունդ կա:	ԵՏՄ անդամ պետությունների հետ կատարվող փոխադարձ առևտրի մասով մաքսային վիճակագրության մեջ անճշտությունների վերացման նպատակով արդեն իսկ ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ: Մասնավորապես, մշակվել և առաջիկայում կհաստատվի «ՀՀ և Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վիճակագրության վարման կանոնները ու փոխադրվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է կարգավորել փոխադարձ առևտրի վիճակագրության վարման ընթացքում առաջացած այն խնդիրները, որոնք հանգեցնում էին անճշտությունների:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
246	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բյուջետային ուղերձում խսպառ բացակայում են ՀՀ և ԼՂՀ միջև ինտեգրացիոն պրոյեկտներ (օրինակ, տուրիզմի, կրթության, արտադրության ոլորտներում):	Բյուջետային ուղերձի Զբոսաշրջության մասում կատարվել են համապատասխան լրացումներ:
247	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ո՞րքան են Հայաստանի համախմբված ներքին և արտաքին պարտքերը: Առաջարկվում է ամրագրել ոչ միայն պետության, այլ նաև մասնավոր սուբյեկտների (ֆինանսական և ոչ ֆինանսական) պարտքերը: Առաջարկվում է, որ կառավարությունը տա ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սուբյեկտների պարտքերի դասակարգումն ու ռիսկայնության գնահատականը:	2016 թվականի բյուջետային ուղերձի նպատակն է ներկայացնել մակրոտնտեսական զարգացումների հիմնական արդյունքներն ու կանխատեսումները: Ընդ որում մակրոտնտեսական կանխատեսումների հիմքում ընկած են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր պարտքի հետ կապված ռիսկերը: Մասնավորապես, պետական բյուջեի պակասուրդի, ինչպես նաև ընթացիկ հաշվի պակասուրդի կանխատեսման հիմքում ընկած են նաև պարտքի ռիսկայնության վերլուծությունները: Իսկ ռիսկայնության գնահատման մասով ՀՀ ֆինանսների նախարարությունը պարբերաբար կատարում է ինչպես պետական պարտքի, այնպես էլ ՀՀ տնտեսության համախառն արտաքին պարտքի կայունության վերլուծություն, որի շրջանակներում պարտքի ռիսկայնությունը գնահատվում է սթրես-թեստերի միջոցով: Ինչ վերաբերում է համախառն արտաքին պարտքի տվյալներին, ապա այն հրապարակվում է ինչպես ՀՀ ԱՎԾ-ի, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկի կայքերում, որտեղ ներկայացված է նաև մասնավոր արտաքին պարտքի դասակարգումը:
248	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Ֆինանսական շուկան մակերեսայնորեն է ուսումնասիրված: Խոսքը վերաբերում է ինչպես դրա խորությանը, այնպես էլ տոկոսադրույքներին: Նախևառաջ, անհասկանալի է փողի զանգվածի առաջանցիկ աճը ՀՆԱ նկատմամբ՝ վերջինս դինամիկայի կտրուկ դանդաղեցման պայմաններում: Վերջին 15 տարիներին փողի զանգվածը միշտ էլ ավելի արագ է աճել: Սակայն այսպիսի ահռելի տարբերություն (փողի	Դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը չափվում է գների կայուն մակարդակի ապահովման՝ ԴՎԲ հիմնական նպատակի իրագործման արդյունավետությամբ: Ըստ այդմ, ՀՀ ԿԲ կողմից վերջին տարիներին իրականացրած դրամավարկային քաղաքականությունը կարելի է համարել

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		զանգվածի աճի տեմպը 4 անգամ գերազանցում է ՀՆԱ աճի տեմպերը) վաղուց չէր եղել: Այն վկայում է դրամավարկային քաղաքականության անարդյունավետության մասին:	արդյունավետ, քանի որ վերջինիս արդյունքում հնարավոր է եղել գնաճը պահպանել նպատակային ցուցանիշի տատանումների թույլատրելի միջակայքում: Ինչ վերաբերում է փողի զանգվածի բարձր աճին, ապա վերջինս վկայում է ընդլայնող դրամավարկային քաղաքականության իրականացման մասին, որը նպաստավոր ազդեցություն է ունենում ՀՆԱ աճի ձևավորման վրա:
249	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Լուրջ վերլուծության կարիք ունի վարկեր/ՀՆԱ և ավանդներ/ՀՆԱ ցուցանիշների դինամիկան: Դրանք շարունակում են աճել արագացված տեմպերով, մինչդեռ ՀՆԱ-ն շատ դանդաղ է աճում: Սա փաստում է այն մասին, որ տնտեսության ֆինանսական սեկտորը վերաբաշխում է իր օգտին ոչ ֆինանսական հատվածի միջոցները: Միևնույն ժամանակ կտրուկ աճել է վատ վարկերի տեսակարար կշիռը: Ուրեմն խնդիր կա. բանկերի գործունեության անարդյունավետությունը բարձրանում է: Կասկած կա, որ միջոցների արտահոսքը նույնպես մեծանում է:	Ֆինանսական ինստիտուտների հիմնական ֆունկցիան ինքնին ֆինանսական միջնորդության իրականացումն ու ոչ ֆինանսական հատվածի միջոցների վերաբաշխումն է: Այդ ֆունկցիան հնարավորություն է տալիս ռիսկերի դիվերսիֆիկացիայի և դրամական հոսքերի ճիշտ կառավարման արդյունքում կարճաժամկետ ավանդներով տրամադրել առավել երկարաժամկետ վարկեր՝ միաժամանակ վարկային ռիսկի բաղադրիչը վարկային տոկոսադրույքների մեջ հասցնելով նվազագույնի: Վերջին տարիներին, իրոք, ֆինանսական միջնորդությունը բավականին խորացել է Հայաստանում, ինչը դրական երևույթ է, քանի որ այն իր հերթին նպաստում է տնտեսական աճին և դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Հաշվի առնելով նույն մեկ շնչին ընկնող ՀԱԵ ունեցող երկրներում վարկ/ՀՆԱ հարաբերակցության համեմատականները՝ Հայաստանը միջին դիրքերում է: Վարկավորման ամենակարևոր նախապայմաններից է, իհարկե, վարկունակ պահանջարկի առկայությունը: Վերջին տարիներին ՀՀ տնտեսության աճի ձևավորման ոլորտում առկա ռիսկերը, ինչպես նաև

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			աճի դանդաղ տեմպերը հանգեցրել են տնտեսությունում վարկերի սպասարկմանն ուղղված տարեկան պարտքի բեռի աճին՝ նպաստելով վարկերի որակի որոշակի վատթարացմանը, ինչի արդյունքում առևտրային բանկերը դարձել են առավել պահպանողական և 2015թ. ընթացքում արդեն նկատվել է վարկային պորտֆելի շուրջ 4% նվազում: Հաշվի առնելով այն, որ վարկերի ժամկետայնության ավելացումը կթեթևացնի տարեկան պարտքի բեռը, կնպաստի վարկերի որակի բարձրացմանը, վարկերի աճին և ֆինանսական միջնորդության խորացմանը՝ ՀՀ ԿԲ-ն իր քաղաքականությամբ մշտապես նպաստում է նշվածի անհրաժեշտ նախապայման հանդիսացող կայուն երկարաժամկետ միջոցների ներգրավման խթանմանը (Տես կետ 250):
250	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Անհասկանալի է վարկային համակարգում առկա խառնաշփոթը: Այսպես, ուղերձից հետևում է, որ 2015թ առևտրային բանկերի մինչև 1 տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքը 2015-ի հուլիսին կազմել է 14.44%՝ 2014թ. 10.27%-ի դիմաց, իսկ դրամով տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 18.18%, 2014թ՝ 15.76%-ի դիմաց: Ստացվում է, բարձրացնում է դրամի պահուստավորման նորմատիվները, իսկ բանկերը բարձրացնում են ավանդների և վարկերի տոկոսադրույքները: Սա Դիոգենեսի տակառի պատմությունն է: Առաջարկում են բյուջեի նախագծով լուծում տալ այս խնդրին:	ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամային միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմատիվի խստացում վերջին տարիների ընթացքում չի իրականացվել: Դեռ ավելին, վերջին մի քանի տարվա ընթացքում ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմատիվը ենթարկվել է փոփոխյին մեղմացման՝ 8%-ից հասցվելով 2%-ի (որոշ պայմանների բավարարման դեպքում 0%)՝ նպաստելով դրամայնացմանը: Կենտրոնական բանկի կողմից խստացումներ իրականացվել են միայն արտաթույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմատիվում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ նորմատիվի կիրառման մեխանիզմում գործում են մի շարք մեղմացուցիչ դեպքեր, որոնց պարագայում կիրառվում են նորմատիվի՝ սահմանված 20%-ից ավելի մեղմ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			դրույթներ (որոշ պայմանների բավարարման դեպքում մինչև 0%)՝ խթանելու համար երկարաժամկետ և կայուն ֆինանսական միջոցների ավելացումը ՀՀ բանկային համակարգում: Արդյունքում, պարտադիր պահուստավորման արդյունավետ դրույթն այսօր կազմում է մոտ 14% և ունի նվազման միտում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ տնտեսությունում դրամային տոկոսադրույթները դեռևս ցածր են իրենց հավասարակշիռ մակարդակից, որի մասին է վկայում դոլարիզացիայի մակարդակի աճը:
251.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Վատ, շատ վատ է վերլուծած փոխարժեքը: Իրար հակասող, ոչինչ չտվող, բիզնես համույթի ներկայացուցիչների ապակողմնորոշող «վերլուծություն» է: Փոխարժեքը կապվում է վճարային հաշվեկշռի հետ՝ առանց տրանսֆերտների: Նման «վերլուծություններ» կարդալը ժամանակի կորուստ է: Ծրագրի ռեալականությունն էլ այն պիտի լինի, որ պետք է անել տրանսֆերտների կանխագուշակում և կատարել դրանց՝ հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա ազդեցության գնահատում: Փոխարժեքը վերլուծելիս ակնարկ անգամ չի արվել առ այն, որ ԿԲ-ն արդեն ինքնուրույն պարտքեր է վերցնում և մսխում փոխարժեքի պահպանման վրա՝ անտեսելով տնտեսության իրական հատվածի շահերը:	Ուղերձում «Փոխարժեք» հատվածը խորը վերլուծության նպատակ չի հետապնդել հաշվի առնելով, որ այդ ցուցանիշը չի կանխատեսվում: Նշված մոտեցումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ ԿԲ-ն վարում է լողացող փոխարժեքի քաղաքականություն և փոխարժեքը ձևավորվում է արտարժույթի շուկայում: Ինչ վերաբերում է ծրագրի իրատեսական լինելուն և ԿԲ-ի պարտքերին, ապա համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկը պարտքեր է վերցնում հիմնականում Արժույթի Միջազգային Հիմնադրամից, որոնք տրամադրվում են ԱՄՀ անդամ պետությունների կենտրոնական բանկերին վճարային հաշվեկշռի աջակցության և կարգավորման նպատակով: Ընդ որում, ԱՄՀ-ի վարկային միջոցները տրամադրվում են՝ ըստ համապատասխան մակրոտնտեսական կայունացման ծրագրերի, որոնց նկատմամբ վերահսկողությունը վերապահված է հենց ԱՄՀ-ին: Այդ վարկային միջոցները համալրում են ԿԲ միջազգային պահուստները և դրանց մարումները ևս իրականացվում են պահուստների հաշվին: Հարկ է նշել, որ ՀՀ ԿԲ կողմից վերցրած վարկերի զուտ մեծու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			թյունը վերջին տարիների ընթացքում նվազել է: Այսպես, 2011 թվականի վերջին ԿԲ պարտքը կազմել է 617 մլն դոլար, իսկ 2014 թվականի վերջին՝ 440 մլն դոլար, ընդ որում 2012 թվականին ԿԲ կողմից այդ վարկերի զուտ մարումը կազմել է 34,8 մլն դոլար, 2013 թվականին՝ 99,8 մլն դոլար, իսկ 2014 թվականին՝ 42,4 մլն դոլար:
252.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առանց պաշտոնական տրանսֆերտների վերլուծության ընթացիկ հաշվի պակասուրդի ցուցանիշը (աղյուսակ 3.6.6.) պարզապես անիմաստ զբաղմունք է:	Առաջարկությունը ընդունվել է: 3.6.6. աղյուսակից հանվել է «ընթացիկ հաշվի պակասուրդ (առանց պաշտոնական տրանսֆերտների)/ՀՆԱ» ցուցանիշը:
253	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բյուջեի նախագծում առաջարկում ենք կրճատել պետական ապարատի պահպանման ծախսերը՝ 2016 – 3 մլրդ, 2017 – 4 մլրդ և 2018՝ 6 մլրդ դրամ:	Պետական կառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման նկատառումից ելնելով առաջարկությունը չի ընդունվել:
254.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առաջարկում ենք ավելացնել կառավարության բյուջետային մուտքերը՝ նախատեսելով 15 մլրդ շահույթ ԿԲ-ում: Ըստ այդմ առաջարկում ենք ԿԲ ծրագրերի կրճատել հատկացումները «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» մասով: Դրանք ԿԲ գործառույթները չեն: Այդ գործառույթները պետք է հանձնել կառավարությանը: Իսկ 2017-ից ընդհանրապես բացառել նման գործառույթները ԿԲ-ում և ամբողջովին նախատեսել կառավարության համար:	Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի՝ շահույթ ունենալու դեպքում այն փոխանցվում է պետական բյուջե միայն հետևյալ մասհանումներն իրականացնելուց հետո՝ 1. Գլխավոր պահուստի համալրում՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25 տոկոսը: 2. Վնասով աշխատած տարիների ընթացքում ՀՀ կառավարության կողմից ՀՀ կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների մարում: Նշենք, որ ներկայումս դրամական զանգվածի 25 տոկոսը գերազանցում է 200 մլրդ դրամը, իսկ գլխավոր պահուստի մեծությունը կազմում է ընդամենը 17 մլրդ դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Ինչ վերաբերում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» մասով «հատկացումներին», ապա վերջիններս համարվում են կապիտալ ներդրումներ և ծախս չեն հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի համար: Տվյալ կառույցների ստեղծումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից պայմանավորված էր ֆինանսական համակարգի զարգացման՝ ՀՀ կենտրոնական բանկին վերապահված խնդրի առկայությամբ, ինչը նաև հիմնավորվում է միջազգային փորձով: Այս ընկերությունները սոցիալական նպատակների հետ մեկտեղ ունեն երկրորդային հիփոթեքային շուկայի օպերատորի դեր՝ միաժամանակ նպաստելով կապիտալի շուկայի զարգացմանը: Հարկ է նշել, որ այս գործառույթները ՀՀ կառավարությանը վերապահելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից զարգացման ծրագրերին ուղղված միջոցները չեն կարող փոխանցվել ՀՀ կառավարությանը, քանի որ այն կդիտարկվի որպես ՀՀ կառավարության վարկավորում, ինչն արգելվում է օրենքով:
255	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առաջարկում ենք վերանայել օրենքով ԿԲ աշխատակիցների համար սահմանած այն նորմը, ըստ որի նրանք պետք է ստանան բանկերի միջին աշխատավարձի չափով: Այդ նորմը ներկայումս սխալ է, քանի որ ԿԲ շահագրգռված է առևտրային բանկերում աշխատավարձի մակարդակը բարձր պահելու մեջ: Արդյունքում, ֆինանսական ոլորտում միջին աշխատավարձը ժողովրդատնտեսական միջինից լավ է 3-5 անգամ: Տնտեսված միջոցներն առաջարկում ենք հաշվառել ԿԲ շահույթում և փոխանցել բյուջե:	ՀՀ կենտրոնական բանկը լծակներ չունի առևտրային բանկերի աշխատավարձը սահմանելու և /կամ աշխատավարձի չափի վրա որևէ այլ կերպ ազդելու համար: Առևտրային բանկերը հանդիսանալով մասնավոր կառույցներ՝ իրենց գործունեությունն իրականացնում են բանկերի բաժնետերերի կողմից որոշված ռազմավարության սկզբունքներին համապատասխան, միևնույն ժամանակ ուղղորդվելով շահույթի հնարավորինս բարձր մակարդակի ապահովման սկզբունքով: Ըստ այդմ, առևտրային բանկերում աշ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			խատավարձի չափը սահմանվում է բաժնետերերի կողմից՝ ելնելով աշխատակիցների կողմից կատարված աշխատանքների արտադրողականության մակարդակից: Ինչ վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այն դրույթին, որ կենտրոնական բանկի աշխատակիցների, որպես բանկային համակարգում բարձր որակավորում ունեցող աշխատակիցների, աշխատավարձը չպետք է ցածր լինի բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձից, ապա այն հիմնավորվում է նրանց անկախությունն ապահովելու, ինչպես նաև կենտրոնական բանկից դեպի առևտրային բանկեր աշխատակիցների զգալի հոսունությունը զսպելու նպատակով:¹ Հետևաբար, գտնում ենք, որ վերը նշված նորմը, ինչպես օրենքի ընդունման պահին, այնպես էլ ներկա պահին սխալ չէ, արդարացված է, և տվյալ նորմի տրամաբանությունը սահմանված է հենց օրենքով: Չնայած այս ամենին, կենտրոնական բանկի ղեկավարությունը՝ երկրում առկա տնտեսական վիճակի և առկա սոցիալական պայմաններից ելնելով, վերջին 2-3 տարիների ընթացքում չի բարձրացրել կենտրոնական բանկի աշխատակիցների աշխատավարձերը, և ներկայումս ԿԲ աշխատակիցների աշխատավարձերը մոտ 30% - ով ցածր են առևտրային բանկերի աշխատակիցների աշխատավարձերից:
256	ՀՀ Ազգային Ժողովի	Առաջարկում ենք պետական ապարատի պահպանման ծախսերի	Նշված առաջարկությունը հայեցակարգային

¹ ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի հոդված 14-ի 2րդ կետը հստակ պատասխանում է այն հարցին, թե ինչու Կենտրոնական բանկի աշխատակիցների միջին աշխատավարձը պետք է համահունչ լինի առևտրային բանկերի միջին աշխատավարձին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Հրանտ Բագրատյան	կրճատման հաշվին հանրապետության շուրջ 40 սահմանամերձ գյուղերում և ավաններում 50-300 մարդ (կին և տղամարդ) զինել, տրամադրել զինվորական հագուստ, այլ պարագաներ, մտցնել մասնակի մշտական վճարովի, պայմանագրային հերթապահության և ծառայության ինտիտուտ: Այս մարդիկ, իրենց հիմնական աշխատանքին զուգահեռ, տարվա մեջ որոշակի օրեր (1-2 շաբաթ) անցնելու ռազմական պատրաստություն, իսկ պատերազմավտանգ օրերին, բանակից ստանալով հանձնարարություն, իրականացնելու են բնակավայրերում հերթապահության, համազյուղացիներին օգնելու, հակառակորդին հայտնաբերելու և լռեցնելու գործողություններ (կամ նպաստելու են այդ գործողություններին): Նշված միջոցառումներն առաջին քայլը կլինեն սահմանամերձ շրջաններում ռազմականացված բնակավայրեր ստեղծելու ճանապարհին:	տեսանկյունից ունի քննարկման անհրաժեշտություն և լուծումները անհրաժեշտության դեպքում պետք է տրվեն ամբողջական համալիր միջոցառումների տեսքով:
257.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բյուջեի նախագծում 1373 մլրդ ծախսից ներդրումները կազմում են ընդամենը 37.4 մլրդ դրամ: Այդ միջոցների սոսկ 25.3 մլրդ-ն է նախատեսված շինարարության համար: Սա կազմում է ՀՆԱ 4.6%-ը: 2016-ին տնտեսական բարձր աճ ունենալու ճանապարհը մեկն է՝ կրճատել ապարատը և կատարել ներդրումներ: Դրա հետ մեկտեղ բյուջետային ուղերձում աղյուսակ 3.1-ում 2016թ համար նշվում է ներդրումներ/ՀՆԱ 20.3%: Ո՞րտեղից այս թիվը: Բացի այդ նույն աղյուսակում 2015-ի համար նշված է 20.1, 2014-ի համար 21.1 և այլն թվեր ներդրումների մասով: Ո՞րտեղից այս թվերը, եթե ԱՎԾ-ն վերջին տարիներին ամենուր արձանագրում է ներդրումների անկում: Միևնույն ժամանակ սպառման մասով արձանագրված է՝ ՀՆԱ 94-96%: Ուրեմն ներդրումների գերակշիռ մասն արտաքին են: Ի՞նչու այդ դեպքում չի բերվում նաև ՕՈՒՆ-ի ծավալները:	Բյուջեի նախագծում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմում են 128.0 մլրդ դրամ, որից շենքերի և շինությունների շինարարությունը 66.5 մլրդ դրամ: Ավել ներդրումներ կատարելու համար կատարված առաջարկը տեսականորեն ընդունելի է, սակայն 2016թվականի պետական բյուջեի սահմանափակ ռեսուրսների պայմաններում հնարավոր չի եղել ընթացիկ ծախսերը վերաբաշխել ի օգուտ կապիտալ ծախսերի: Նշված աղյուսակում ներկայացված ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշները վկայում են հենց վերջին տարիներին ներդրումների նվազման մասին, իսկ 2016 թվականի ներդրումների աճի հետ կապված դիրքորոշումը ներկայացված է հարցադրումների 223-րդ կետում: Մեր կողմից կատարված վերլուծությունները ցույց են

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տալիս, որ 2015թ. տնտեսությունում խնայողություններ են գեներացվել, իսկ ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը, ինչպես նաև տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումները՝ ՕՈՒՆ-երը 2015թ. նվազում են, ինչը նշանակում է, որ ներդրումների գերակշիռ մասի արտաքին լինելը հիմնավոր չէ, և ընդհակառակը ներդրումների գերակշիռ մասը ձևավորվում են ներքին ռեսուրսների հաշվին: Իսկ ՕՈՒՆ-ի ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է բյուջետային ուղերձի 3.6.6 աղյուսակում:
258	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առաջարկում ենք առանձին բացվածքով տալ կուտակային կենսաթոշակային միջոցների հաշվին կատարվող ներդրումները:	Կուտակային կենսաթոշակային միջոցների հաշվին կատարվող ներդրումները ներկայացված են կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների ինտերնետային էջերում և մշտապես թարմացվում են: Այդ միջոցները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում են ֆոնդերի մասնակիցների ընդհանուր բաժնային սեփականությունը: Դրանք չեն հանդիսանում պետական միջոցներ, չեն կառավարվում /ներդրվում/ պետության կողմից, այդ ներդրումները մշտապես փոփոխվում են՝ կախված ֆոնդերի կառավարիչների ներդրումային որոշումներից, և հետևաբար, չեն կարող առանձին բացվածքով ներկայացվել:
259	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առաջարկում են բյուջեի նախագծում հատուկ կանգ առնել սիրիահայերի խնդրի վրա, միջոցառումներ և համապատասխան միջոցներ նախատեսել նրանց կյանքը բարելավելու ուղղությամբ: Բանակցել ԵՄ և ԱՄՆ հետ այդ ուղղությամբ լրացուցիչ միջոցներ (բնակարանների շինարարություն, կենսապայմանների ֆինանսավորում) ներգրավել:	ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Մշակութային ծրագրերի իրականացում» ծրագրի շրջանակներում «Սփյուռքահայերի ինտեգրում» միջոցառման համար նախատեսված է 11.0 մլն դրամ, որն պետք է ուղղվի սիրիահայերի և իրաքահայերի ՀՀ հասարակությանն ինտեգրման հիմնախնդիրների լուծմանը: Նշենք նաև,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	<< կառավարության դիրքորոշումը
			որ վերոհիշյալ ծրագրով նախատեսված գումարները բնակարանների շինարարության կամ կենսապայմանների բարելավման նպատակով չեն ծախսվում: Այս պահի դրությամբ ՄԱԿ ՓԳՀ (UNHCR) հետ համագործակցության շրջանակներում շուրջ 1000 սիրիահայ ընտանիքներ օգտվում են բնակվարձերի փոխհատուցման ծրագրից: Կառավարությունը ժողովրդագրական քաղաքականության համատեքստում կարևորում է հանրապետության բնակչության տարբեր շերտերի, այդ թվում << ներգաղթած սիրիահայերի բնակարանային ապահովման խնդիրը: Հարկ է նշել, որ քննարկումների ավարտական փուլում է գտնվում << ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրի նախագիծը, որի կարևորագույն բաղադրիչներից մեկը հանդիսանում է «Բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանով ապահովման պետական նպատակային ծրագիրը»: Այն նախատեսում է մի շարք ուղղություններով, այդ թվում՝ նոր կառուցապատված, երկրորդային շուկայից գնված, ինչպես նաև պատրաստի կոնստրուկցիաներից հավաքովի բնակարանների տրամադրում բնակարանի կարիք ունեցող ընտանիքներին: Ընդ որում բնակարանային ապահովման ծրագրի շահառուներ կարող են դառնալ նաև բնակարանի կարիք ունեցող սիրիահայ ընտանիքները՝ համաձայն «Սոցիալական աջակցության մասին» << օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, ըստ որի սոցիալական աջակցության իրավունք ունի << բնակվող յուրաքանչյուր ոք՝ << քաղաքացիները, << բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ցիություն չունեցող, ինչպես նաև ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:
260.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բյուջետային ուղերձում ՀՀ-ից կապիտալի արտահանումը չի վերլուծվել: Այսպես, 2009-2012թթ ըստ ԱՎԾ-ի փոխանցումներն արտերկրին 199 մլրդ դրամից հասել են 279 մլրդ դրամի: Ինչ է իրավիճակը 2014, 2015 և (սպասվելիք) 2016-ին՝ վերլուծված չէ:	Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի պաշտոնական տվյալների, առաջարկության մեջ բերված ցուցանիշը ոչ թե կապիտալի արտահանում է, այլ ոչ ռեզիդենտներին փոխանցված սկզբնական եկամուտը՝ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և սեփականությունից եկամուտների հանրագումարը: Նշված ցուցանիշը ներկայացնելուց այն պետք է ներկայացնել զուտով, որի դեպքում պարզ կլինի որ մեր ռեզիդենտներն ավելի շատ եկամուտ են ստացել դրսից, քան ոչ ռեզիդենտները՝ մեր տնտեսությունից: Այսինքն տեղի է ունեցել ներհոսք: Բյուջետային ուղերձում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ միավորների միջև հարաբերությունները ներկայացված են ընթացիկ հաշվի հիմնական հոդվածների տեսանկյունից և քանի որ ոչ ռեզիդենտներին փոխանցված սկզբնական եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ում նշանակալի չէ (մոտ 7%), հետևաբար ուղերձում դրա առանձին վերլուծելը գտնում ենք ոչ նպատակահարմար: Նշենք նաև, որ ԿԲ-ի ոչ առևտրային բնույթի փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության համաձայն վերջին տարիներին վերը նշված փոխանցումների արտահոսքը երկրից աճի տեմպի նվազման միտում ունի:
261.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Կարևորագույն խնդիր է գիտությանը հատկացվող միջոցների ավելացումը, դրանց տեսակարար կշռի բարձրացումը ՀՆԱ նկատմամբ: Կատարվել է ճիշտ հակառակը: Գիտությանը և գիտատեխնիկական	ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27-ի նիստի N20 արձանագրային որոշմամբ ընդունված Գիտության զարգացման ռազմավարությամբ նախատեսված է

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		գործունեությանը հատկացվող միջոցների կշիռն իջել է՝ 2015թ 27.2%-ից (13922,1 մլն դրամից) 2016թ 0.26%-ի (14153,5 մլն դրամի): Սա անթույլատրելի է: Առաջարկում ենք գիտության ծախսերը սահմանել ՀՆԱ առնվազն 0.3%-ի չափով և առաջիկայում արագորեն դարձնել 1%:	Ֆինանսական ծավալների զգալի ավելացում՝ 2020 թվականին այն մոտեցնելով միջին եվրոպական չափանիշներին, այն է՝ ՀՆԱ-ի մոտ 1,8 տոկոս, ինչը ենթադրում է ոչ միայն բյուջետային հատկացումների ավելացում, այլև տնտեսության մասնավոր հատվածից հատկացվող ֆինանսավորման բազմաձևության օգտագործում, նոր մեխանիզմների ներդրում և միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում:
262.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2015թ գիտության բյուջեն քննարկելիս ասվեց, որ ոլորտի բազային ֆինանսավորումը աստիճանաբար կկրճատվի, իսկ թեմատիկ ֆինանսավորման տեսակարար կշիռը կբարձրանա: Կատարվել է ճիշտ հակառակը. Թեմատիկ ֆինանսավորման տեսակարար կշիռը գիտության ծախսերի մեջ եթե 2015թ թեմատիկ ֆինանսավորումը գիտության ծախսերի մեջ կազմել է 9.57%, իսկ 2016-ին՝ 9.60%: Նման տեմպերով առաջ գնալու պարագայում գիտության բարեփոխումը, անցումը թեմատիկ ֆինանսավորման կտևի... 3300 տարի: Առաջարկում ենք թեմատիկ ֆինանսավորման ծավալները 2016-ին ավելացնել և գիտությանն ու գիտատեխնիկական գործունեությանը հատկացված միջոցների մեջ հասնել ¼-ի՝ հետագայում արագորեն ավելացնելու միտումով:	Նպատակահարմար չենք համարում գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային կամ որևէ այլ ձևի տեսակարար կշռի կրճատման միջոցով պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կշիռն ավելացնելը, քանի որ գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերն ընտրվում ու ֆինանսավորվում են մրցութային կարգով, փորձաքննության միջոցով: Գիտությանն ուղղվող միջոցների համամասնությունները պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման օգտին կտրուկ փոխելը կարող է բերել ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետության իջեցման, առողջ մրցակցության թուլացման: Ինչ վերաբերում է բազային կամ նպատակային-ծրագրային ֆինանսավորմանը, ապա «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսավորման ձևերից յուրաքանչյուրը լուծում է որոշակի խնդիրներ, մասնավորապես, հնարավորություն է տալիս միջոցներ ուղղել գիտության, նրա ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի արդիական ու հեռանկարային խնդիրների լուծմանն ուղղված արժեքավոր ծրագրերի, տարա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ծաշրջանային նշանակության խոշոր գիտատեխնոլոգիական նախագծերի իրականացմանը: Ֆինանսավորման ձևերի միջև համամասնությունները պետք է որոշվեն՝ ելնելով գիտության, տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման կարիքներից ու առաջադրված խնդիրներից: Առաջարկված փոփոխությունները կարող են սահմանափակել շատ կարևոր ծրագրեր ֆինանսավորելու հնարավորությունները:
263	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյան	Ինչպես և 2014-ին ակտուալ է միջնակարգ կրթության և առողջապահության պետական պատվերը իրացնել այդ ծառայություններից օգտվող քաղաքացիներին վճարման սերտիֆիկատներ տրամադրելով՝ վերացնելով դպրոցների ու հիվանդանոցների ֆինանսավորումը բյուջեից:	Առաջարկությունը չի ընդունվել: Բժշկական օգնությունը և սպասարկումը վճարման սերտիֆիկատների միջոցով կազմակերպելը կարծում ենք չի նպաստի բնակչության առողջական վիճակի լավացմանը: Հարցը քննարկվել է նաև միջազգային փորձագետների մասնակցությամբ և նրանք նույնպես բացասական դիրքորոշում են ներկայացրել նման կարգով բժշկական օգնության և սպասարկման իրականացման վերաբերյալ: Իսկ ինչ վերաբերում է կրթությանը, ապա առաջին հայացքից ներկայումս գործող ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևը և վճարման սերտիֆիկատների տրամադրման առաջարկը բավականին նմանություններ ունեն, սակայն հաշվի առնելով, որ սերտիֆիկատների տրամադրման առաջարկը կարող է առաջացնել լրացուցիչ ռիսկեր, վերջինիս ընդունումը կամ մերժումը հնարավոր կլինի միայն մանրամասն վերլուծությունների, շահագրգիռ մարմինների միջև քննարկումների արդյունքում: Միևնույն ժամանակ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պատրաստակամ է յուրաքանչյուր կառուցողական առաջարկության քննարկմանը, որը կբխի կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների իրականացմանը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			նացումից:
264.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Կառավարության բյուջետային ուղերձի Mas 1a-ն և Mas 2a-ն պետք միավորել:	Բյուջետային ուղերձի կառուցվածքում ՄԱՍ 11- Ա- ն տեղադրվել է անմիջապես ՄԱՍ 1 - Ա-ից հետո:
265	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	2014թ.-ին հանդես եմ եկել առաջարկությամբ՝ 2015թ. պետական բյուջեի ծրագրում ներառելու ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Կառավարության կողմից առաջարկությունը չի ընդունվել: Համայնքն ունի 4527 բնակիչ: Առկա է մեկ հանրակրթական դպրոց, մեկ մսուր-մանկապարտեզ և մեկ մշակույթի տուն: Մսուր-մանկապարտեզում հաճախում են շուրջ 124 երեխաներ: Այգավան համայնքի մսուր-մանկապարտեզը գտնվում է ծայրահեղ անբարվոք վիճակում: Չի գործում մանկապարտեզի սանհանգույցը, չկան տարրական պայմաններ երեխաների սանիտարա-հիգիենիկ պայմաններն ապահովելու համար, վերանորոգման ենթակա են ճաշարանը, ննջասենյակները, խաղահրապարակը, շենքի տանիքը: Չի գործում շենքի ջեռուցման համակարգը, որի պատճառով մանկապարտեզի աշխատանքները նոյեմբերից մինչև ապրիլ ամիսները դադարեցվում են: Հաշվի առնելով տվյալ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը համայնքի համար՝ խնդրում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 30 մլն. ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
266	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	2014թ.-ին հանդես եմ եկել առաջարկությամբ՝ 2015թ. պետական բյուջեի ծրագրում ներառելու ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների վերսկսման և իրականացման ծրագիրը, որը կառավարության կողմից չի ընդունվել:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Համայնքն ունի 2-6 տարեկան 45 երեխա, որոնք պետք է հաճախեն մանկապարտեզ: Մանկապարտեզի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին և մինչև 1998թ. վերանորոգման չի ենթարկվել: 2013թ. մարզպետարանի կողմից կատարվել է ուսումնասիրություն տվյալ շենքի վերանորոգման համար և կազմվել է նախահաշիվ՝ 20 մլն. ՀՀ դրամի չափով: Մարզպետարանի կողմից ըստ նախահաշվի հատկացումներն արվել են, իրականացվել են որոշակի աշխատանքներ, ապամոնտաժվել շենքի փայտից կառուցված մասը, հանվել են հին փայտյա դռներն ու լուսամուտները, քանդվել են որոշ միջնապատեր: Հատկացված ֆինանսական միջոցները սակայն չեն բավականացրել և աշխատանքները դրանով իսկ դադարեցվել են և մնացել անավարտ: Հաշվի առնելով տվյալ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների վերսկսման անհրաժեշտությունը՝ խնդրում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների վերսկսման և իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 20 մլն. ՀՀ դրամ:	
267.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (Օ18 ընտրատարածք)	2014թ.-ին հանդես եմ եկել առաջարկությամբ՝ 2015թ. պետական բյուջեի ծրագրում ներառելու ՀՀ Արարատի մարզի Սիսավան համայնքում մանկապարտեզ կառուցելու աշխատանքների իրականացման ծրագիրը, որը կառավարության կողմից չի ընդունվել: Արարատի մարզի Սիսավան համայնքն ունի մոտ 2500 բնակչություն, 3-5 տարեկան 128 երեխա, որոնք մանկապարտեզ հաճախելու կարիք ունեն: Խնդիրը կապված է հենց նրա հետ, որ համայնքը չունի մանկապարտեզ և այդ երեխաները որևէ կերպ չեն կարող օգտվել մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Բնակիչներից միայն 13 ընտանիք է կարողացել իրենց երեխաներին տեղավորել այլ համայնքների մանկապարտեզներում: Հրատապ հարց է դարձել, որ համայնքն ունենա թեկուզև փոքր մանկապարտեզ և կարողանա սպասարկել բնակիչներին:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ Արարատի մարզի Սիսավան համայնքում մանկապարտեզի կառուցման աշխատանքները 2016 թվականին կիրականացվեն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է պետական օժանդակություն, ինչպես նաև կարևորելով Սիսավան համայնքի մանկապարտեզ ունենալու խիստ անհրաժեշտությունը՝ խնդրում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Սիսավան համայնքում մանկապարտեզ կառուցելու աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 145.517.82 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից: Առդիր 6 էջ:	
268	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Խնդիրը կապված է ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքի միջհամայնքային ճանապարհների հետ, որոնք գտնվում են քանդված և անանցանելի վիճակում: Եղանակային տարբեր պայմաններում երթևեկության կազմակերպման համար դրանք դառնում են նույնիսկ վտանգավոր: Միջհամայնքային ճանապարհահատվածի որոշակի մասը տվյալ համայնքի և այլ համայնքների հետ կապող օղակ է հանդիսանում և կարևոր է այդ հատվածների նորոգման աշխատանքների իրականացումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքի գյուղապետարան տանող ճանապարհի մինչև հին կամուրջ ճանապարհահատվածի ասֆալտապատման աշխատանքների ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 81425.24 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից: Առդիր 8 էջ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
269	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Խնդիրը կապված է ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզի հետ, որի 2-րդ մասնաշենքը և վարչական մասն արդեն երկար տարիներ գտնվում են անբարեկարգ վիճակում և հրատապ վերանորոգման անհրաժեշտություն ունեն:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Շենքային ոչ բարենպաստ պայմանները լուրջ խոչընդոտ են հանդիսանում մանկապարտեզի բնականոն աշխատանքների կազմակերպման համար՝ բացասաբար ազդելով ամենօրյա դաստիարակչական աշխատանքների վրա: Հաշվի առնելով տվյալ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը համայնքի համար՝ խնդրում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի և վարչական մասի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 58660.46 հազ. ՀՀ դրամ: Առդիր 29 էջ:	ծախսերի առաջնահերթությունից:
270.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Դեռևս 2013թ.-ից հանդես եմ եկել առաջարկություններով՝ պետական բյուջեի ծրագրում ներառելու Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Կառավարության կողմից առաջարկությունները չեն ընդունվել: Խնդիրը կապված է Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի հետ, որի տանիքը գտնվում է ծայրահեղ վատ վիճակում և ակնհայտ է, թե անձրևաջրերի ինչպիսի հոսք կարող է տեղի ունենալ տվյալ մանկապարտեզում: Մանկապարտեզը սպասարկում է մեծ թվով ընտանիքների երեխաների և նման պայմաններում գրեթե անհնար է դառնում կազմակերպել մանկապարտեզի բնականոն աշխատանքները և ապահովել սանիտարահիգիենիկ նորմերի պահանջները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է անհապաղ պետական օժանդակություն՝ խնդրում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 39,993.50 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի N 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքները 2016 թվականին կիրականացվեն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Են կից: Առդիր 19 էջ:	
271.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Խնդիրը կապված է ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնքի «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ: Բժշկական կենտրոնի շենքը չունի ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգ և այս առումով ունի համալիր վերակառուցման անհրաժեշտություն՝ պայամանավորված բժշկական կենտրոնի ջրամատակարարման և ջեռուցման արդիական համակարգի բացակայությամբ: Վերջիններս խիստ բացասական ազդեցություն են ունենում բժշկական կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վրա հատկապես առավելապես ցուրտ եղանակային պայմաններում: Տաք ջրամատակարարման համակարգի բացակայությունը սանիտար-հիգիենիկ և համաճարակային պայմանների ապահովման առումով լուրջ բարդություններ է առաջացնում, իսկ ջեռուցման համակարգի բացակայությունն ինքնին արդեն այլ հիվանդությունների ձեռքբերման նախադրյալներ է ստեղծում տվյալ բժշկական կենտրոնում բուժվողների համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ 2016թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կաթսայատան, ջեռուցման և տաք ջրամատակարարման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 43437.16 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից: Առդիր 30 էջ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
272.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Սուքիաս Ավետիսյան	Ի նկատի ունենալով, որ M 1 – Հայրենյաց – Հայկասար – Տուֆաշեն – Հ 21 10 կմ երկարությամբ ճանապարհահատվածը գտնվում է անմխիթար վիճակում, առաջարկվում է 120 մլն ՀՀ դրամ հատկացնել ճանապարհը ավազակույսային տարբերակով երթևեկելի դարձնելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
273.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բազմասեր Առաքելյան	2016 թվականի ընթացքում մարզային համայնքներում «ՍԵՎԱՆ» ՄՀԿ-ի մարզական մեծամասշտաբ միջոցառումների անցկացման համար ավելացնել «ՍԵՎԱՆ» ՄՀԿ-ին 2016 թվականին տրամադրվող պետական բյուջեն 3 մլն 800 հազար դրամով:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում 09 բաժնի 05 խմբի 01 դասի «04. Արտադարձական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրով «Սևան» գյուղական մարզական ընկերության գծով նախատեսված ծախսերն ավելացել են 3.8 մլն դրամով:
274.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բազմասեր Առաքելյան	ՀՀ մեծարգո նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրերից է եղել Աշտարակ, Փարպի, Բազմադրյուր և Ղազարավան համայնքների ոչ բարվոք վիճակում գտնվող միջհամայնքային ճանապարհների վերակառուցման խնդրի իրագործումը, սակայն նախագահական ընտրություններից հետո վերակառուցվեց նշված համայնքային ճանապարհների միայն կես հատվածը, իսկ շինարարական աշխատանքները թողնվեցին անավարտ: Խնդրում եմ՝ հաշվի առնել, որ այս համայնքներն ունեն շուրջ 5000-6000 բնակիչ, ովքեր գրեթե ամեն օր օգտվում են այս համայնքային ճանապարհից և հայտնում են իրենց դժգոհությունները ստեղծված անբարվոք վիճակից և կիսատ թողնված աշխատանքներից, բացի այդ ծրագիրը եղել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական խոստումներից: Խնդրում եմ 2016 թվականի բյուջեով նախատեսեք և նշված համայնքներում ավարտին հասցրեք կենսական նշանակություն ունեցող կիսատ թողնված ճանապարհների շինարարական աշխատանքները:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
275.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կորյուն Նահապետյան	Երևանի թիվ 91 դպրոցի վերանորոգման նպատակով նախատեսել 30 մլն դրամ: Դպրոցի մասնաշենքերի տանիքները, դռները և պատուհանները քայքայված են, մանրահատակը, սանհանգույցները վերանորոգման կարիք ունեն: Մասնաշենքերից և ոչ մեկում այսօրվա չափանիշներին համապատասխանող մարզադահլիճ չկա, եղածը խոնավ նկուղում տեղակայված հնամաշ դահլիճն է: Դպրոցը չունի հանդիսու-	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ք. Երևանի N 91 դպրոցի վերանորոգման նպատակով նախատեսվել է 90.0 մլն դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		թյունների պատշաճ դահլիճ:	
276.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արշակ Մխիթարյան	Նոր Հաճն քաղաքի N 3 դպրոցի նորոգում	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի N 3 դպրոցի նորոգման նպատակով նախատեսվել է 60.0 մլն դրամ:
277.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյան	Երևան քաղաքի Տիգրան Մեծի 42 հասցեում գտնվող Վահան Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոցի հիմնավերանորոգում: 2012թ. ՀՀ սեյսմիկ ծառայության կողմից վերանշյալ դպրոցը գնահատվել է որպես երրորդ աստիճանի վթարային: 2013թ. ՀՀ Քաղաքաշինության նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից ևս դպրոցի շենքին տրվել է նույն վթարայնության աստիճանը: 2014թ. դպրոցի հիմնավերանորոգման աշխատանքները ներառվել են պետբյուջեի ծախսերի մեջ, իրականացվել են նախագծանախահաշվային աշխատանքները: Սակայն 2014թ. հոկտեմբերի 16-ի կառավարության թիվ 1168-Ա որոշմամբ չեղյալ է հայտարարվել դպրոցի հիմնավերանորոգման հետ կապված պետական գնումների ընթացակարգը: Դպրոցի հիմնավերանորոգման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ այստեղ է գործում ողջ ՀՀ տարածքում Վահան Տերյանի միակ թանգարանը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
278.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյան	Որպես ՀՀ կառավարության բարի ավանդույթի շարունակականության դրսևորում՝ առաջարկում եմ Ջավախքի 150 երեխաների ընդգրկումը «Ամառային ճամբար» ծրագրում:	2014-2015 թվականներին «Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է Ջավախքից 150 երեխաների ամառային հանգիստը: Ըստ տարածքների՝ երեխաների ընդգրկվածությունը որոշվում է միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:
279.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան	ՀՀ Արմավիրի մարզի Շենիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման համար հատկացնել 50 մլն դրամ (մշակույթի տանն առկա են Մինասի մոտիվներով որմնանկարներ, որոնք շենքի վատ վիճակի	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		պատճառով վտանգված են):	Շենիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման նպատակով նախատեսվել է 50.0 մլն դրամ:
280	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Ավետիսյան /108 ընտրատարածք/	ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծում նախատեսել 16.8 մլն դրամ՝ Լոռու մարզի Տաշիր քաղաքի ջրամբարից Մեղովկա համայնք գնացող 5 կմ երկարությամբ սնուցող ջրատարի կառուցման համար: Հիմնավորում: Ջրատարը, որը 550 բնակիչ ունեցող համայնքի խմելու ջրի միակ աղբյուրն է, կառուցվել է 1960-ական թվականներին և վաղուց կորցրել է պիտանելությունը: Ջրատարի մաշվածության պատճառով Մեղովկա համայնքի բաշխիչ ջրամբար գրեթե ջուր չի հասնում, ինչի հետևանքով բնակչությունը տարիներ շարունակ գրկված է մշտական խմելու ջրից:	Աշխատանքների իրականացման հարցը կքննարկվի ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ոռոգման համակարգերի հիմնանորոգման նպատակով նախատեսված 1.0 մլրդ դրամի շրջանակներում:
281.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Ավետիսյան /108 ընտրատարածք/	«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի համար ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 2,760.0 մլն դրամ, 2015թ. պետական բյուջեով հաստատված 1,829.4 մլն դրամի դիմաց: Սուբսիդավորումն ավելացել է 930.0 մլն դրամով, հետևաբար անհրաժեշտ է վերանայել սուբսիդավորման միջոցով պարարտանյութերի տրամադրման չափորոշիչները և ընդլայնել շահառուների շրջանակը: Առաջարկում ենք մատչելի գներով պարարտանյութ տրամադրել ոչ միայն առավելագույնը 3 հա հողատարածք ունեցող հողօգտագործողներին, ինչպես թույլատրվել է մինչ այժմ, այլ նաև նրանց, ում հողակտորը չի գերազանցում 10 հա-ն: Հիմնավորում: Մինչև 10 հա հողակտոր ունեցող հողօգտագործողները, որոնց չի կարելի խոշոր կամ գերխոշոր համարել, նույնպես ունեն պետական աջակցության կարիք: Քանի որ 2016 թվականի պետական բյուջեով սուբսիդավորման գումարն ավելացել է մոտ 51%-ով, ապա տրամաբանական է, որ նույնքանով պետք է ավելանա շահառուների թիվը:	Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերի շրջանակներում պետական բյուջեից հատկացվել էր 1 829.4 մլն դրամ: Ճշգրտումներից հետո այն դարձել է 2 661.6 մլն դրամ (1 829.4 մլն +832.2 մլն = 2 661.6 մլն): Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման և համայնքներ տեղափոխման համար ՀՀ պետական բյուջեի նախագծով 2016 թվականին նախատեսված է 2 760 մլն. դրամ: 2016 թվականի ծրագրի իրականացման համար պահանջվող լրացուցիչ գումարը 2015 թվականի համեմատ կազմում է 98.4 մլն. դրամ (2 760 մլն-2 661.6 մլն=98.4 մլն): Հաշվարկների համար հիմք է հանդիսացել 2015 թվականի պարարտանյութերի իրացման գները (թեև հարկ է հաշվի առնել, որ տարվա ընթաց-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			քում նշված գները կարող են տատանվել): Ուստի հաշվի առնելով վերոգրյալը, ծրագրում չափորոշիչների մեջ փոփոխություն չի կատարվել:
282.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյան /012 ընտրատարածք/	ՀՀ 2016թ. պետական բյուջեում Արագածոտնի մարզի Շողակն համայնքի համայնքկենտրոնի համար նախատեսել 2,8 մլն դրամ՝ ա/ դուռ, պատուհանների փոխարինման համար. բ/ տանիքի վերանորոգման համար	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
283	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյան /012 ընտրատարածք/	ՀՀ 2016թ. պետական բյուջեում Արագածոտնի մարզի Ափնա համայնքի համար նախատեսել 2,8 մլն դրամ՝ Մանկապատեզի վերանորոգման նպատակով (այն կազմում է դպրոցի շենքի մաս):	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա համայնքի մանկապարտեզի վերանորոգման նպատակով նախատեսվել է 2.8 մլն դրամ:
284.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյան /012 ընտրատարածք/	ՀՀ 2016թ. պետական բյուջեում Արագածոտնի մարզի Հարթավան համայնքի համար նախատեսել 2,825 մլն դրամ՝ խմելու ջրագծի կառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
285	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյան /012 ընտրատարածք/	ՀՀ 2016թ. պետական բյուջեում Արագածոտնի մարզի Երնջատապ համայնքի համար նախատեսել 18 մլն դրամ՝ T-150 կամ՝ համազոր այլ մեխանիզմի ձեռքբերման նպատակով (ձմռանը ճանապարհների մաքրման, իսկ գարնանն ու աշնանը ճանապարհների բարեկարգման, վարուցանքի կազմակերպման համար):	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արագածոտնի մարզի Երնջատապ համայնքի համար ձմռանը ճանապարհների մաքրման, գարնանն ու աշնանը ճանապարհների բարեկարգման և վարուցանքի կազմակերպման համար մեխանիզմ ձեռքբերելու նպատակով նախատեսվել է 18.0 մլն դրամ:
286	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյան	«Վերադարձ Հայաստան» հիմնադրամը նախաձեռնել է Երևանում միջազգային կիսամարաթոնի անցկացումը դեռևս 1 տարի առաջ, մի շարք վազորդների կողմից հիմնադրամին դիմելուց հետո՝ որպես Հայաստանում սպորտի և առողջ կենսակերպի պրոպագանդման միջոց: Հետաքրքրված կողմերի հետ քննարկումներից հետո ստեղծվել է	Առաջարկությունը չի ընդունվել: 2015 թվականի հոկտեմբերի 3-ին Երևան քաղաքում անցկացվել է 1-ին միջազգային կիսամարաթոնը: Մի միջոցառում, որը լինելու է շարունակական ինչ-պես Երևանում, այնպես էլ հանրապետության տար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		միջոցառման կազմկոմիտե, որի մեջ մտել են մի շարք վազքի ակումբներ և հետաքրքրված կազմակերպությունների (հետագայում նաև Երևանի քաղաքապետարանի) ներկայացուցիչներ: Նման վազքի մրցույթ կազմակերպվել է նաև Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարության և Ատլետիկայի ֆեդերացիայի կողմից: Արդյունքում 2015 թվականի հոկտեմբերին, 1 օրվա տարբերությամբ, Երևանում տեղի են ունեցել վազքի 2 տարբեր միջոցառում: Հիմնադրամի կողմից կազմակերպված կիսամարաթոնը հավաքել է 1550 վազորդ աշխարհի 34 երկրներից, ներառյալ լավագույն պրոֆեսիոնալ վազորդների, որոնցից ավելի քան 500-ը մասնակցել են հեղինակավոր 21 կմ վազքին: Գրանցված լավագույն արդյունքը եղել է 1 ժամ 9 րոպե 57 վարկյան, ինչը լուրջ սպորտային արդյունք է, իսկ հաղթող Ռինաս Ախմադեևը նաև այլ միջազգային մրցաշարերի հաղթող է: Բոլոր արդյունքները էլեկտրոնային հավաստագրում են ստացել: Մասնակիցներից յուրաքանչյուրին անհատապես կարելի է տեսնել կայքում: Մրցույթին ևս միջազգային հավաստագրում է ստացել: Միջոցառումը, բնականաբար, անցկացվել է քաղաքի հետ համատեղ, հովանավորել է նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը: Կիսամարաթոնը մեծ տոն է եղել, և պրոֆեսիոնալ կազմակերպման շնորհիվ, այդ օրը չի խանգարվել քաղաքի բնականոն կենսագործունեությանը: Հաջորդ տարի ևս հիմնադրամը պատրաստվում է անցկացնել նմանատիպ մրցույթ Երևանում: Այսպիսով, անհասկանալի է մնում, թե ինչի համար է անհրաժեշտ պետական միջոցների հաշվին վազքի այլ մրցույթ անցկացնելը, եթե մասնավոր կառույցը կարողանում է կազմակերպել այդ նույն միջոցառումը, այն էլ այդքան բարձր մակարդակով: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ աղյուսակի («Հայաս-	բեր մարզերում, և այս ծրագրի շնորհիվ 2018 թվականից հնարավոր կլինի կազմակերպել 43 կմ երկարությամբ լիարժեք միջազգային մարաթոն: Միջոցառումն անցկացվել է պետական ծրագրի շրջանակներում և հաստատվել է 2012 թվականին, սակայն այն չի իրականացվել մինչև 2014 թվականը Բոստոնում տեղի ունեցած ահաբեկչության հետևանքով՝ աթլետիկայի միջազգային ֆեդերացիան արգելեց անցկացնել մարաթոնյան վազքեր այն երկրներում, որոնք չունեն անվտանգության ապահովման երաշխիքներ և 2014 թվականի նոյեմբեր ամսին Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիան միջազգային ֆեդերացիայից ստանալով այդ երաշխիքներն այս տարի անցկացրեց միջազգային կիսամարաթոնը: Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի կողմից: Միջոցառումն ամբողջությամբ նախագծված է եղել միջազգային ստանդարտներին համապատասխան՝ խորհրդատվական կազմակերպությունների և ՌԱՆԱՐՄ ընկերության մասնագետների կողմից: Ծրագիրն իրականացվել է Աթլետիկայի միջազգային ֆեդերացիայի և Միջազգային մարաթոնների ասոցիացիայի հովանու ներքո և ներառված է եղել Եվրոպայի աթլետիկայի մարզական միջոցառումների օրացուցային պլանում: Միջոցառման անցկացման համար Երևան են ժամանել Եվրոպայի աթլետիկայի մրցավարական կոմիտեի 8 անդամներ, իրենց սարքավորումներով: Մի փոքր ակնարկ Երևանում անցկացված միջազգային կիսամարաթոնյան վազքի մասին. Կիսամա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման») 23-րդ կետի («ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն») 27-րդ ենթակետով («Երևանում կայանալիք միջազգային մարաթոնյան վազքի անցկացման ապահովում այդ թվում ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման») նախատեսված ծախսն ամբողջությամբ՝ 21,015.6 հազ. դրամի չափով կրճատել:	րաթոնն անցկացվեց 4 տարբեր տարածություններով՝ 2,5 կմ, 5 կմ, 2 x 10,5 կմ (փոխանցավազք՝ էստաֆետ) և 21 կմ, մասնակցեցին 25 երկրների ավելի քան 4717 տարբեր տարիքի վազողներ՝ ներառյալ պրոֆեսիոնալ, սիրողական մարզիկներ, դպրոցականներ, ուսանողներ, այդ թվում՝ ռազմական ինստիտուտներից, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ: Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող Սերգեյ Լուկինը և Իրինա Սերգեևան, Ռումինիան ներկայացնող Անդրե Փիսկան, ովքեր հաղթեցին 21 կմ վազքատարածությունում, մասնակցելու են 2016 թվականին Ռիո դե Ժանեյրոյում անցկացվելիք օլիմպիական խաղերին: Կիսամարաթոնի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը զետեղված է www.runarm.am կայքում: Յուրաքանչյուր տարի աշխարհի տարբեր քաղաքներում տարին մի քանի անգամ անցկացվում են կիսամարաթոնյան և մարաթոնյան վազքեր: Դրանց մեջ բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Առաջ անցնելով տեղեկացնենք նաև, որ օրերս Լյուբլյանայում անցկացված աթլետիկայի Եվրոպայի ֆեդերացիայի տարեվերջյան ամփոփիչ վեհաժողովում հաստատվել է 2016 թվականի մարզական միջոցառումների օրացուցային պլանը, որում ընդգրկված է երևանյան կիսամարաթոնը, որն անցկացվելու է հոկտեմբերի 1-ին: Աթլետիկայի միջազգային ֆեդերացիան մեկ ան-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			գամ ևս պատրաստ է աջակցել Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիային՝ տրամադրելով տեխնիկական սարքավորումներ և միջազգային կարգի մրցավարներ՝ միջոցառումը կազմակերպված և պրոֆեսիոնալ մակարդակով անցկացնելու համար: Իսկ այժմ անդրադառնանք 2015 թվականի հոկտեմբերի 4-ին «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի նախաձեռնությամբ անցկացված միջազգային կիսամարաթոնին: Միջազգային միջոցառումները պետք է ընդգրկված լինեն կա՛մ տվյալ մարզածևի միջազգային մարզական միջոցառումների օրացուցային պլանում, կա՛մ հանրապետական մարզական միջոցառումների օրացուցային պլանում և ստանան միջազգային կառույցների թույլտվությունը, որպեսզի միջոցառումը կարողանա որակվել որպես միջազգային: Մենք ողջունում ենք յուրաքանչյուր սպորտային նախաձեռնություն, որն իրականացվում է հանրապետությունում և որը նպաստում է սպորտի զարգացմանը, մասսայականացմանը և առողջ ապրելակերպի ամրապնդմանը: Սակայն միաժամանակ տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն նմանատիպ միջազգային միջոցառում նախաձեռնելուց առաջ պետք է համագործակցի սպորտի պետական կառույցի և առավել ևս տվյալ մարզածևը զարգացնող ու աշխատանքները համակարգող ֆեդերացիաների հետ: Եթե տվյալ դեպքում «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը համագործակցեր Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի հետ ի դեմս ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Էմմիյանի, կարծում ենք՝ 1 օրվա

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տարբերության խնդիր չէր առաջանա: Իսկ ինչ վերաբերում է մասնակիցների քանակին, որը կազմել է 1000-1200 մարդ, նշենք, որ վազորդների գերակշիռ մասը եղել են Հայաստանի աթլետիկայի հավաքական թիմի անդամներ, միջազգային մրցումների մասնակիցներ (որոնց գործուղումները իրականացվել են Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի ֆինանսական միջոցների հաշվին) և աթլետիկայի տարբեր մարզադպրոցների սաներ: «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի անցկացրած կիսամարաթոնյան վազքը եղել է բիզնես ծրագրի շրջանակներում, քանի որ յուրաքանչյուր մասնակից վճարել է մասնակցության վճար՝ սկսած 3000 դրամից մինչև 9000 դրամ: Իսկ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի կողմից իրականացված միջոցառումը եղել է անվճար՝ պետական ծրագրի շրջանակներում՝ ի շահ հայկական սպորտի զարգացման:
287.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	Վանաձոր քաղաքի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջն ունի 161 ուսանող, ինչպես նաև 62 աշակերտ երաժշտական դպրոցում: Այն կառուցվել է 1971 թվականին: Կառուցվելուց հետո անցել է 45 տարի, սակայն քոլեջը մինչ այժմ հիմնանորոգման չի ենթարկվել: Մասնավորապես, քոլեջի պատուհաններից շատերը կոտրված են, ամրացված պոլիէթիլենով, շրջանակները քայքայված ու փտած, դրանք անգամ մինչև վերջ չեն փակվում: Զեռուցման համակարգն ընդհանրապես երկրաշարժից հետո չի աշխատում, շենքը ջեռուցում են էլեկտրական սարքերով, սակայն կիսափակվող պատուհանների առկայության պայմաններում ծնունդը միևնույն է շենքում չափազանց ցուրտ է:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի պատուհանները փոխելու, ջեռուցման համակարգի անցկացման (վերանորոգման), մարզադահլիճի և համերգային դահլիճի նորոգման աշխատանքները 2016 թվականին կիրականացվեն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Ընդհանուր առմամբ պատուհանների փոխման և ջեռուցման համակարգի նորոգման համար անհրաժեշտ է 70.685,34 հազ. ՀՀ դրամ: Քոլեջի մարզադահլիճը գտնվում է 1-ին հարկից ներքև և խոնավության պատճառով պատերը հոտել են, հատակն ընդհանրապես անմխիթար վիճակում է: Քոլեջի աշխատակիցների և երեխաների ուժերով այնտեղ որոշ վերանորոգումներ են կատարվել, որոնք սակայն, դրանք հեռու են հարցի լուծումից: Մարզադահլիճի նորոգման համար անհրաժեշտ է 21.499,68 հազ. ՀՀ դրամ: Նույն խնդիրն առկա է համերգային դահլիճում: Դահլիճի բեմը ժամանակին փլուզվել է, ինչի հետևանքով գործիքները չեն տեղաշարժում, որպեսզի բեմը վերջնականապես չքանդվի: Համերգային դահլիճը վերանորոգելու համար անհրաժեշտ է 18.426,24 հազ. ՀՀ դրամ գումար: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսել Վանաձոր քաղաքի Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի պատուհանները փոխելու, ջեռուցման համակարգի անցկացման (վերանորոգման), մարզադահլիճի և համերգային դահլիճի նորոգման աշխատանքների ֆինանսավորումը՝ 110.611,26 հազ. ՀՀ դրամի չափով: Կից ներկայացվում է նախահաշիվը:	
288	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյան	Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հիմնական կենսաթոշակը 16.000 ՀՀ դրամ է: Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում, որն 1-ին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 40%-ն է կազմում, այսինքն՝ ընդամենը 22.400 ՀՀ դրամ: Մինչդեռ, համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հայտնած տվյալների՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2015 թվականի 3-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ ըստ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետի-	Առաջարկությունը չի ընդունվել: Ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է բժշկատնային փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին, եթե հաշմանդամություն սահմանելու կամ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու ժամանակ անձն ունեցել է 2-ից մինչև 10 օրացուցային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	<< կառավարության դիրքորոշումը
		կայի, կազմել է ամսական 55.394,3 ՀՀ դրամ: Ընդ որում, այստեղ չեն հաշվարկված դեղորայքային և այլ անհրաժեշտ ծախսերը: Գաղտնիք չէ, որ 1-ին խմբի հաշմանդամները սոցիալապես ամենախոցելի խումբն են և հիմնականում 100% անաշխատունակ: Հայաստանի Հանրապետությունը, համաձայն Սահմանադրության 1-ին հոդվածի, սոցիալական պետություն է, ինչը սակայն, բացարձակապես հակադարձվում է հաշմանդամներին տրվող սոցիալական օգնության ոլորտում, քանի որ այն գումարը, որը նախատեսվում է վճարել 1-ին խմբի հաշմանդամներին ուղղակի սիմվոլիկ բնույթ է կրում և անգամ նրանց գոյության ապահովման համար բավարար չէ: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խմբագրել այնպես, որ 1-ին խմբի հաշմանդամներն ամսական ստանան առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքին համարժեք (55.394 ՀՀ դրամից ոչ պակաս) կենսաթոշակ:	տարվա աշխատանքային ստաժ: Ըստ օրենքի 15-րդ հոդվածի՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի և կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է, իսկ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում. 1-ին խմբի համար՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով, 2-րդ խմբի համար՝ 20 տոկոսի չափով: Այսինքն՝ աշխատանքային, այդ թվում՝ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի չափը կախված է կենսաթոշակառուի աշխատանքային ստաժից: 1-ին խմբի հաշմանդամների կենսաթոշակի նվազագույն չափը, հաշվարկված 2 տարվա աշխատանքային ստաժով, կազմի 22.720 դրամ, որից 6.400 դրամը հաշմանդամության 1-ին խմբի համար տրվող հավելումի գումարն է: Առաջարկության համաձայն՝ 1-ին խմբի հաշմանդամների կենսաթոշակի նվազագույն չափը ներկայումս հաշվարկվող 22.720 դրամի փոխարեն պետք է լինի 55.394 դրամ: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշմանդամության 1-ին խումբ ունեցող կենսաթոշակառուների թիվը կազմել է 6.062: Սա նշանակում է, որ առաջարկությունն ընդունելու դեպքում հարկ կլինի ՀՀ պետական բյուջեից հատկացնել տարեկան լրացուցիչ առնվազն 2.4 մլրդ դրամ: Ընդ որում, այս դեպքում ակնհայտ է, որ անհրաժեշտ կլինի վերանայել նաև 2-րդ խմբի հաշմանդամների կենսաթոշակի չափը, քանի որ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների կենսա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			թոշակների մոտ 3 անգամ տարբերությունը մի կողմից՝ հղի է կոռուպցիոն լուրջ ռիսկերով, մյուս կողմից՝ սոցիալական արդարության տեսակետից արդարացված չէ: Սոցիալական արդարության տեսակետից խոցելի է նաև 2 տարվա աշխատանքային ստաժով հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի չափը 48 տարվա աշխատանքային ստաժով տարիքային աշխատանքային կենսաթոշակի չափին հավասարեցնելը: Այս դեպքում խեղաթյուրվում է կենսաթոշակի բովանդակությունը, այն է՝ կենսաթոշակի իրավունքը և չափը սերտորեն պետք է փոխկապակցվեն անձի աշխատանքային գործունեությանը, նրա աշխատանքային ստաժին:
289	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում մյուս պետական կրթական հաստատությունների հետ միասին նշվում են նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները: Սակայն միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների (օրինակ՝ քոլեջների) աշխատակիցները սոցիալական փաթեթից չեն օգտվում, ինչը նշանակում է, որ կառավարության կողմից ցուցաբերվում է խտրական մոտեցում՝ առանց օբյեկտիվ հիմքի: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի շահառուների ցանկում ընդգրկել նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2014 թվականին միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում անձնակազմի թվաքանակը կազմել է 5651 մարդ, որոնց սոցիալական փաթեթով ապահովման համար 2016 թվականին անհրաժեշտ կլինի շուրջ 617,8 մլն դրամ:
290	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	Վանաձոր քաղաքի 3-րդ աստիճանի վթարային Աղայան 65 շենքի վիճակը նախորդ և ընթացիկ տարիներին ավելի է վատթարացել, ինչի	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Էդմոն Մարության	կապակցությամբ բնակիչները դիմել են տեղական, մարզային և կենտրոնական իշխանություններին: «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ կողմից 2013 թվականի հուլիսի 29-ին տրված եզրակացության համաձայն՝ շենքի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակն ընդհանուր առմամբ գնահատվում է անբավարար և վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի: «Շենքը ենթակա է ընդհանուր ուժեղացման-վերակառուցման: Մինչև շենքի ընդհանուր ուժեղացումը հրատապ անհրաժեշտ է ապահովել արևմտյան երկայնական պատի կայունությունը՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները. սկսած հիմքի վերին շուրթից մինչև պատուհանատակերն իրականացնել ոչ պակաս 25 սմ հաստությամբ բետոնե պատ; պատն իրականացնել հաջորդական հատվածամասերով՝ հանելով թուլացած քարերը; կառուցվող բետոնե պատը խարսխաձողերով ամրակապել պատի պահպանվող շարվածքի հետ՝ օգտագործելով ցնցում չառաջացնող գործիքներ»: Այս խնդրի կապակցությամբ բազմիցս դիմել են նախկին և ներկա կառավարություններին ու ստացել բացասական պատասխան: Մինչդեռ 2015 թվականի պետական բյուջեով 2 մլրդ դրամ է հատկացվել Երևան քաղաքում 3-րդ կարգի վթարային շենքերի նորոգման աշխատանքներին՝ հերթական անգամ անտեսելով արդեն 26 տարի երկրաշարժի սպիները կրող աղետի գոտու վթարային շենքերը, որտեղի բնակիչները գիշերը քնելիս վստահ չեն, որ առավոտյան ողջ ու առողջ կարթնանան, ու շենքը նրանց վրա փլուզված չի լինի: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով միջոցներ հատկացնել Վանաձորի Աղայան 65 շենքի ամրացման աշխատանքների համար: Կից ներկայացնում են «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ ընկերության կողմից 2013 թվականի հուլիսի 29-ին տրված եզրակացության պատճենը:	տեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Ինչ վերաբերում է Երևան համայնքին ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից հատկացված 2 մլրդ դրամի աջակցությանը, ապա նշված գումարը նախատեսված է ոչ թե 3-րդ կարգի վթարային շենքերի նորոգման աշխատանքների համար, այլ Երևան քաղաքի քանդման ենթակա 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների բնակարանային ապահովման նպատակով նոր բնակելի շենքերի կառուցման համար:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Առդիր՝ 08 թերթ:	
291.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Քաղաք Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոցի ասֆալտապատում- 42.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
292.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Քաղաք Սպիտակ, Առափնյա փողոցի ասֆալտապատում - 37.000.000 դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատման նպատակով նախատեսվել է 37.0 մլն դրամ:
293	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Քաղաք Սպիտակ, Թումանյան փողոցի ասֆալտապատում - 145.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
294	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Լուսադբյուր, Գյուլապետարանի շենքի կառուցում - 19.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
295	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Լեռնավան, Գյուլապետարանի շենքի կառուցում - 17.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
296	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի	Գյուլ Լեռնանցք, Դպրոցին կից մարզադահլիճի կառուցում - 21.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Համբարձումյան (029 ընտրատարածք)		ծախսերի առաջնահերթությունից:
297.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Արևաշող, Խմելու ջրագծի համակարգային բարելավում - 8.000.000 դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
298	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Քարածոր, Հանդիսությունների շենքի կառուցում (Շենքը մասնակի առկա է) - 13.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
299	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Նորիսաչակապ, Ռոզման համակարգի կառուցում - 20.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
300	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Զրաշեն, Համայնքային կենտրոնի կառուցում - 18.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
301.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Շենավան, Խմելու ջրագծի ցանցային վերանորոգում - 6.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
302	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի	Գյուլ Գոգարան, Խմելու ջրագծի ցանցային վերանորոգում – 17.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Համբարձումյան (029 ընտրատարածք)		ծախսերի առաջնահերթությունից:
303	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Սարահարթ, Ոռոգման ցանցի վերանորոգում - 8.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
304	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Գեղասար, Խմելու ջրագծի 1500մ հատվածի կառուցում - 5.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
305	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Շիրակամուտ, Խմելու ջրագծի վերանորոգում և կառուցում - 22.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
306	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Կաթնաջուր, Դպրոցին կից մարզադահլիճի կառուցում - 21.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
307	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Մեծ Պարնի, Մանկապարտեզի շենքի կառուցում - 25.000.000 դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման նպատակով նախատեսվել է 25.0 մլն դրամ:
308	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի	Գյուլ Ծաղկաբեր, Գյուղապետարանի շենքի կառուցում - 17.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Համբարձումյան (029 ընտրատարածք)		ծախսերի առաջնահերթությունից:
309.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուղ Հարթագյուղ, Ոռոգման ցանցի ջրամբարի կառուցում - 23.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
310.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուղ Սարալանջ, Համայնքային կենտրոնի վերանորոգում - 7.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
311.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուղ Արջուտ, Համայնքային կենտրոնի վերակառուցում - 15.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
312.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուղ Հալավար, 5կմ ճանապարհահատվածի բարեկարգում - 10.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
313.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուղ Լեռնապատ, 4 փողոցի գազաֆիկացում (1500մ) - 10.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
314.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի	Գյուղ Բազում, Խմելու ջրի համակարգի կառուցում (գյուղում խմելու ջրի բաշխման համակարգ գոյություն չունի) – 25.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Համբարձումյան (029 ընտրատարածք)		ծախսերի առաջնահերթությունից:
315.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Ազնվածոր, ճանապարհների վերանորոգում - 19.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
316.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Խնկոյան, 25 կմ ճանապարհահատվածի վերանորոգում - 15.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
317.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Դարպաս, 4 կմ ճանապարհահատվածի վերանորոգում և կոյուղագծերի անցկացում - 55.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
318.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Սարամեջ, 4կմ ջրագծի ցանցային վերանորոգում - 14.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
319.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Գյուլ Ղուրսալի, Հանդիսությունների սրահի կառուցում - 15.000.000 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
320	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Աղաբաբյան	Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 11 մանկապարտեզի տանիքի վերանորոգման համար նախատեսել 20 մլն դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Արմավիր քաղաքի թիվ 11 մանկապարտեզի տանիքի վերանորոգման նպատակով նախատեսվել է 20.0 մլն դրամ:
321.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդալյան	Խնդրում ենք վերականգնել «Ակունք» ազգագրական համույթի պետական կարգավիճակը, որը հանդիսանում է հայ ժողովրդական երգարվեստի հիմնասյուներից մեկը՝ հիմնադրված 1980 թվականին՝ հայ երգիչ – բանահավաք, ազգագրագետ Հայրիկ Մուրադյանի և նրա դստեր՝ Մարոյի ջանքերով, որը հետագայում մեծ ճանաչում ստացավ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Ընդհանուր արժեքը՝ 21 մլն դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում «Ակունք» ազգագրական համույթի պահպանման համար նախատեսվել է 21.0 մլն դրամ:
322.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արշակ Մխիթարյան	Նոր Հաճն քաղաքի 65 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները գտնվում են անմխիթար վիճակում, առաջարկում եմ՝ Նոր Հաճն քաղաքի 65 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերականգնման համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից հատկացնել 30 մլն դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
323.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարո Կարապետյան	ՀՀ Արարատի մարզի Շահումյան համայնքի մանկապարտեզի ընթացիկ վերանորոգում	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Շահումյան համայնքի մանկապարտեզի ընթացիկ վերանորոգման նպատակով նախատեսվել է 20.0 մլն դրամ:
324.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարո Կարապետյան	ՀՀ Արարատի մարզի Շահումյան համայնքի միջնակարգ դպրոցի ընթացիկ վերանորոգում	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Շահումյան համայնքի միջնակարգ դպրոցի ընթացիկ վերանորոգման նպատակով նախատեսվել է 30.0 մլն դրամ: